ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ՍԱՀԱԿԻ

# ԿԻՄԵՐՆԵՐԸ ԵՎ ՍԿՅՈՒԹՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ)

**Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների դոկտորի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2021

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում:

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝** պ.գ.դ. **Ա. Ս. Փիլիպոսյան**
պ.գ.դ. **Ե. Հ. Գրեկյան**
պ.գ.դ. **Օ. Ս. Խնկիկյան**

**Առաջատար կազմակերպություն՝** Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թ. հունիսի 14-ին, ժամը $14^{00}$-ին, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի 007 հնագիտության և ազգագրության մասնագիտական խորհրդում (հասցեն՝ Երևան-0025, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թ. մայիսի 4-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

պատմական գիտ. թեկնածու **Ա. Է. Հարությունյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը**: Հայկական լեռնաշխարհում կիմերական և սկյութական ցեղերի առկայության փաստը վաղուց է կարևորվել և դրա վրա է հրավիրվել հնագետների ուշադրությունը (Самуелян 1931, 86-87. Манандян 1944, 23, 41. Tumanyan 2016, 26-27): Հայաստանում սկյութական տարրի առկայությունը մ.թ.ա. VII-VI դարերում հավանական է համարվում (Пиотровский 1959, 232-256. Тирацян 1978, 111-112. Погребова 1984, 42. Тер-Мартиросов 1995, 32): Սույն աշխատանքով մենք փորձել ենք հիմքեր ստեղծել սահմանելու կիմերա-սկյութական մշակութային ընդհանրության տեղը Հայկական լեռնաշխարհի համաժամանակյա (էթիունյան և ուրարտական) հնագիտական մշակույթների շարքում: Դրանով գոնե մասամբ կվերացվի այն հակասությունը, որ կա հնագույն գրավոր (այդ թվում՝ սեպագիր) աղբյուրների հաղորդած տեղեկությունների և հնագիտական հետազոտությունների արդյունքների միջև: Այն է՝ տարաբնույթ գրավոր աղբյուրները հաղորդում են Հայկական լեռնաշխարհի մի շարք տարածաշրջաններում կիմերական և սկյութական տարբեր ցեղախմբերի առկայության մասին, իսկ տվյալ ժամանակաշրջանի հուշարձանները պեղող հնագետները հիշյալ խնդրին գրեթե չեն անդրադառնում: Մյուս կողմից, հատկապես արդիական է այն միտքը, որ սկյութների (և կիմերների) ծագումը և վաղ ժամանակաշրջանի պատմությունը հնարավոր չէ լուսաբանել միայն հյուսիսսևծովյան կամ հյուսիսկովկասյան տարածաշրջանների տվյալների հիման վրա (Пиотровский 1940, 80. Ильинская 1983, 80): Ենթադրվում է, որ «հյուսիսկովկասյան սկյութական մշակույթը»՝ որպես բրոնզե և երկաթե զենքերի տիրապետող հեծյալ ռազմիկների քոչվորական մշակույթ, կազմավորվել է նախքան սկյութների Առաջավոր Ասիա արշավելը (Иессен 1954, 129-131): Սակայն հենց այդ պատճառով, որ դա «հեծյալ ռազմիկների քոչվորական մշակույթ է»[1], դրա կազմավորման գործընթացում հնարավոր չէ անտեսել ո՛չ մերձսևծովյան մյուս տարածաշրջանների, ո՛չ էլ Հայկական լեռնաշխարհի համաժամանակյա մշակույթների դերը:

Բնականաբար, այսօր ավելի է կարևորվում հնագիտության նշանակությունը կիմերական և սկյութական հիմնախնդիրների լուծման ճանապարհին: Գնահատելով հատկապես սեպագիր արձանագրությունների, անտիկ շրջանի ու միջնադարյան պատմիչների հաղորդումների և համեմատական լեզվագիտության դերն այս հարցում, հարկ է ընդգծել

[1] Մեկ այլ սահմանմամբ՝ «հովվական-քոչվորական մշակույթ», որը սփռվում էր Հունգարիայից մինչև Սիբիր. տե՛ս Sher 1988, 47.

հնագիտության առաջնային տեղն ապագա տարաբնույթ հետազոտությունների շարքում: Հնագիտական յուրաքանչյուր նոր հուշարձանի հայտնաբերումը կարող է ճշգրտումներ մտցնել դիտարկվող խնդրի պարզաբանման գործում:

Քննարկվող հիմնախնդիրը Հայաստանի հնագիտության շրջանակներում մինչ օրս հետազոտության առարկա չի դարձել, մինչդեռ խոսքը վերաբերում է Հայկական լեռնաշխարհի թափանցած այդ հին մշակույթների ընդհանրությանը: Վերջինիս անտեսումը ուսումնասիրողներին կանգնեցնում է փակուղու առջև: Հարց է առաջանում՝ որևէ տարածաշրջանում հնագիտական երկու և ավելի մշակույթների համաժամանակյա առկայության պայմաններում արդյո՞ք իմաստ ունի տիպաբանական-համեմատական մեթոդի օգնությամբ թվագրել հնագիտական որևէ համալիր՝ առանց դրա մշակութային պատկանելությունը ճշգրտելու: Նման «տիպաբանության» վրա հիմնված ցանկացած թվագրություն մշտապես ճշգրտման կարիք կունենա, քանի դեռ քննարկվող տարածաշրջանում հստակ չեն սահմանազատվել տվյալ դարաշրջանի հնագիտական մշակույթները: Հայտնի է, որ մշակույթն առաջնություն ունի տիպի նկատմամբ, իսկ պատմամշակութային արժեք ունեցող տիպեր ստանալու համար պետք է ելնել կոնկրետ հնագիտական մշակույթից (Клейн 1991, 121, 243-244):

Հայկական լեռնաշխարհի արևելյան հատվածի կիմերական ու սկյութական դամբարաններն ուսումնասիրելու ընթացքում մենք հայտնվեցինք հակասական իրավիճակի առջև: Քանի որ ակնհայտ «կիմերա-սկյութական» հատկանիշներով օժտված և մ.թ.ա. VIII դարի վերջ – VI դարով թվագրվող հնագիտական բազմաթիվ փակ համալիրների զուգահեռները կարելի է գտնել մ.թ.ա II հազարամյակի վերջ – I հազարամյակի սկզբով թվագրվող դամբանային համալիրներում, անհրաժեշտ էր անդրադառնալ վաղ համարվող այն հնագիտական հուշարձանների մշակութային պատկանելության ու թվագրության խնդիրներին, որոնք իրենց կառուցվածքով, թաղման ծիսակարգով կամ գույքի տիպաբանական կազմով համասեռ են կիմերա-սկյութական մշակութային ընդհանրությանը բնորոշ դամբանային համալիրներին (Туманян 2019, 26): Այսօր կարիք է առաջացել նաև վերանայելու այն տեսակետը, որ Հայկական լեռնաշխարհ ներխուժած քոչվորների փոքրաթիվ զորաջոկատները լուրջ ազդեցություն չէին կարող թողնել արդեն կազմավորված հայկական մշակույթի վրա: Նախկինում ընդունված այս թյուր պատկերացումը հետևանք էր այն բանի, որ մեր տարածաշրջանում կիմերա-սկյութական ցեղախմբերի առկայության փաստերը երբեք չէին ընդհանրացվել և արժեքավորվել մշակութային

առումով: Մինչդեռ, հին հայկական մշակույթի կազմավորման գործում իր նպաստն է ունեցել նաև մշակութային երրորդ տարրը: Այսօր արդեն կարելի է հավաստել, որ կիմերա-սկյութական մշակութային ընդհանրության առաջավորասիական տարբերակը՝ էթիունյան և ուրարտական մշակույթների հետ միասին, պատմաքաղաքական իրադարձությունների բերումով, դարձել է հին հայկական մշակույթի կարևոր բաղադրիչներից մեկը:

Կիմերական և սկյութական մշակույթների առկայության անտեսումը որոշ հեղինակների բերել է միանգամայն անընդունելի այն կարծիքին, որ Անդրկովկասում բրոնզի և երկաթի դարերի սահմանաբաժանը մ.թ.ա. VII դարն է (Тереножкин 1971, 83): Հետաքրքիր է, որ այս եզրակացությունն արվում է Գետաբեկի N 48 դամբարանի, Մինգեչաուրի թաղումների և այլ հնագիտական համալիրների ուսումնասիրության հիման վրա, որոնք բոլորն էլ, հենց հեղինակի հավաստմամբ, պատկանում են սկյութական մշակույթին, այսինքն՝ Այսրկովկաս բերվել են դրսից: Նույն սխալն է կրկնվում Ս. Եսայանի և Մ. Պոգրեբովայի հեղինակած «Անդրկովկասի սկյութական հուշարձանները» աշխատության գրախոսությունում, որտեղ քննարկվող իրողությունները վերագրվում են «վաղ երկաթի դարաշրջանի սկզբին» (Черненко, Махортых 1986, 226): Վաղ երկաթի դարաշրջանի ժամանակագրումը մ.թ.ա. II հազարամյակի վերջին և մ.թ.ա. I հազարամյակի առաջին դարերով ոչ թե «հնագիտական առասպել է տվյալ տարածաշրջանում երկաթի դարաշրջանի խոր հնության վերաբերյալ», ինչպես կարծում էին որոշ հետազոտողներ (Тереножкин 1971, 83. Воронов 1980, 218), այլ հավաստի գիտական իրողություն: Մ.թ.ա. IX-VIII դարերում Հայաստանում հաստատուն անցում է կատարվել երկաթի արտադրությանը (Мартиросян 1956, 83): Հայաստանի մ.թ.ա. VII-VI դարերի հնագիտական մշակույթների շարքում կիմերա-սկյութական մշակութային ընդհանրության գոյության անտեսումը բերում է տրամաբանական հակասության: Ակնհայտ սխալ է այն պնդումը, որ մ.թ.ա. VII-VI դարերում, այսինքն՝ պետական կազմավորումների կամ երկաթի լայն տարածման դարաշրջանում, Հայկական լեռնաշխարհում միաժամանակ շարունակում էր գոյատևել նաև բրոնզի դարաշրջանը:

Հայկական լեռնաշխարհում առկա կիմերա-սկյութական մշակութային ընդհանրության ուսումնասիրության հարցը կարևոր է և արդիական: Այն անտեսելը հանգեցնում է գիտական լուրջ սխալների՝ Հայքի կիմերական և սկյութական մշակութային համալիրները, ակամա, վերագրվում են էթիունյան կամ ուրարտական մշակույթներին: Թեման արդիական և հրատապ է ոչ միայն հնագիտության, հայագիտության և արևելագիտության, այլև սկյութագիտության համար:

**Աշխատանքի նպատակն ու խնդիրները**: Այս աշխատությունը միտված է վաղուց ձևավորված հնագույն հայկական մշակույթից հին հայկականին անցման գործընթացում կիմերական և սկյութական բաղադրիչների դերը վերհանելուն և արժեքավորելուն: Հեղինակի նպատակն է՝ համակողմանի ուսումնասիրության արդյունքում, պարզաբանել մեզանում գրեթե չհետազոտված մի հիմնախնդիր: Խնդիր է դրվել նաև նախադրյալներ ստեղծել, որպեսզի Հայկական լեռնաշխարհի արևելյան հատվածի կիմերա-սկյութական մշակութային ընդհանրությանը պատկանող հուշարձանների համակարգում առանձնացվեն դամբանային և բնակելի համալիրների երկու խումբ, որոնց արդեն, ամենայն հավանականությամբ, հնարավոր կլինի անվանել կա՛մ կիմերական, կա՛մ սկյութական: Կարծում ենք, որ թաղման ծեսի և բնակելի համակարգերի բաղադրամասերի հետագա մանրակրկիտ վերլուծության արդյունքում հնարավոր կդառնա կիմերական և սկյութական համալիրները քննարկել առանձին-առանձին՝ որպես ինքնուրույն մշակույթների բաղկացուցիչներ:

**Ուսումնասիրության տարածական և ժամանակագրական սահմանները**: Հետազոտության աշխարհագրական սահմանները, ընդգրկելով Հայկական լեռնաշխարհի արևելքը և դրա հարակից տարածաշրջանները, հասնում են մինչև Հյուսիսային Կովկաս և Սև ծովի ավազան: Առանց մերձսևծովյան և հյուսիսկովկասյան տարածաշրջանների կիմերական և սկյութական հնագիտական համալիրների մանրակրկիտ վերլուծության, անհնարին կլիներ Հայկական լեռնաշխարհի համապատասխան համալիրների հետ տիպաբանական զուգահեռների անցկացումը և ընդհանրությունների պարզաբանումը:

Ուսումնասիրության ժամանակագրական սահմաններն ամփոփված են մ.թ.ա. VIII դարի վերջ – VI դարի 3-րդ քառորդ միջակայքում: Կարելի է հավաստի համարել, որ կիմերների ներխուժումներն Առաջավոր Ասիա կայացել են մ.թ.ա. 714 թվականից ոչ ուշ, երբ նրանք արդեն հասել էին Ուրարտուի սահմաններին (Sulimirski 1954, 283. Иванчик 1990, 8, 16. Алексеев 1992, 28. Ivantchik 2001, 14): Սկյութների առկայությունը Հայկական լեռնաշխարհում, ըստ երևույթին, կարելի է փաստագրել մ.թ.ա. 680-ականների երկրորդ կեսին, երբ, Ռուսախինիլիում գտնված պալատական տնտեսության անձնակազմի հաշվառման կավե մի սալիկի սեպագիր արձանագրության համաձայն, իշկուգուլյան «արքա» Շագայորդին ուղևորվել է Մանա երկիր (Дьяконов 1963, 38-39. Կարագյոզյան 1984, 78, 80. Арутюнян 2001, 330-331 (N 412). Salvini 2012, 145):

**Ուսումնասիրության մեթոդը** համալիր բնույթ ունի: Հաշվի առնելով հնագիտության այսօրվա ձեռքբերումները հին մշակույթների ուսումնասիրության ասպարեզում, կարելի է եզրակացնել, որ առանձին իրերի

ընտրության սկզբունքը կարող է նպաստել միայն տարաբնույթ առնչությունների պարզաբանմանը, իսկ յուրաքանչյուր մշակույթի գիտական քննությունը հարկ է սկսել մշակութակազմիչ համալիրների հնարավորինս լիարժեք ներգրավելուց և համակողմանի հետազոտումից: Մշակութային որևէ մեկ հատկանիշի (թեկուզև՝ էական) առանձնացումով և ուսումնասիրությամբ բավարարվելը «մեթոդաբանական անօգնականության» օրինակ է: Կիմերա-սկյութական մշակութային ընդհանրության հետազոտության ընթացքում, շերտագրական դիտողությունների սակավության պայմաններում, լայնորեն կիրառվել են համեմատական-տիպաբանական և վիճակագրական մեթոդները:

**Աշխատության գիտական նորությունը և գործնական նշանակությունը** պայմանավորված է նրանով, որ սա տվյալ թեմայով առաջին ընդհանրացնող և համակարգված հնագիտական ուսումնասիրությունն է:

Մերժելի է ներմուծված մեկ-երկու առարկաների հիման վրա հնագիտական համալիրների թվագրման սկզբունքը, քանի որ այդ իրերը կարող են որևէ համալիրի կազմում հայտնվել իրենց արտադրությունից բավականին երկար ժամանակ անց (Рабинович 1936, 79-80): Այսինքն, միայն առանձին իրերի կամ փաստերի հետազոտության շրջանակներում սահմանափակվելով, հնարավոր չէ արմատական լուծում տալ մեր առջև դրված հիմնախնդրին: Այդ նպատակով, տողերիս հեղինակը պատասխան պահանջող հարցերին ցուցաբերել է հայեցակարգային նոր մոտեցում. հիմքեր ստեղծել պարզաբանելու կիմերա-սկյութական մշակութային ընդհանրության[2] տեղը Հայկական լեռնաշխարհի համաժամանակյա հնագիտական մշակույթների շարքում: Դա թույլ կտա հնագիտական իրողությունները հնարավորինս համաժամանակացնել պատմական իրադարձությունների արդյունքում ձևավորված մշակութային իրավիճակին:

Աշխատության մեջ քննարկվող հիմնախնդիրները գրեթե չեն լուսաբանվել գիտական հետազոտություններում, ուստի այն ուսումնասիրողների ուշադրությունն է հրավիրում արծարծվող հարցերին: Այս աշխատանքը կարող է նաև կայուն հիմք հանդիսանալ նոր հետազոտությունների համար՝ կիմերական և սկյութական մշակույթների տարանջատման ու առանձին ուսումնասիրության առումով:

**Ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը:** Ատենախոսության հիմքը կազմող հնագիտական հետազոտությունների արդյունքները

[2] Այս եզրույթն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվել տողերիս հեղինակի կողմից. տե՛ս Թումանյան 2018, 214:

զուգակցվում են գրավոր վկայությունների, տեղանվանաբանական տվյալների և բանագիտական տեղեկությունների հետ: Կիմերա-սկյութական հիմնախնդրի հետազոտությունը սկսվում է գրավոր աղբյուրների քննությունից: Մեր ձեռքի տակ են եղել սեպագիր արձանագրությունների, Աստվածաշնչի և պատմիչների հաղորդումները (Թումանյան 2020, 207): Հիշյալ բոլոր սկզբնաղբյուրները գնահատելի և խիստ կարևոր տեղեկություններ են հաղորդում քննարկվող հարցի առնչությամբ:

**Ատենախոսության փորձաքննությունը:** Սույն աշխատությունն ամբողջությամբ քննարկվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վաղ հնագիտության բաժնում և երաշխավորվել է հրապարակային պաշտպանության: Ուսումնասիրության հիմնական դրույթները ներկայացվել են հեղինակի հրատարակած ավելի քան երկու տասնյակ հոդվածներում, դրանց արդյունքների վերաբերյալ զեկուցումները քննարկվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում:

**Աշխատանքի կառուցվածքը:** Աշխատությունը կազմված է երկու հատորից: Առաջինում ամփոփված է հիմնական տեքստը: Այն բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության և համառոտագրությունների ցանկերից: Երկրորդ հատորը հավելված է, որը ներառում է թեման լուսաբանող հեղինակային մեկ քարտեզ, 28 նկար, գրչանկարների 73 և վիճակագրական երեք աղյուսակներ:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածությունում ներկայացվում են խնդրի հետազոտվածության առկա վիճակը, թեմայի արդիականությունը, աշխատության նպատակն ու ուսումնասիրության մեթոդը, սկզբնաղբյուրները, արծարծվող հարցերի տարածական և ժամանակագրական շրջանակները, կիմերա-սկյութական հիմնախնդրի լուծման գործում հնագիտական հետազոտության անհրաժեշտությունը, աշխատանքի գիտական նորությունը և գործնական նշանակությունը:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս գլուխը բաղկացած է երեք բաժնից: Դրանցից առաջինում ի մի են բերվում սեպագիր աղբյուրների հաղորդումները, քանի որ դրանք անփոխարինելի են՝ որպես պատմական իրադարձությունների ականա-

տեսների և ժամանակակիցների կողմից մեզ հասած վկայություններ (Թումանյան 2020, 207): Ասուրա-բաբելական սեպագիր արձանագրություններում սկյութներն անվանվում են *աշգուզա* կամ *իշկուզա* (Пиотровский 1959, 235. Дьяконов 1956, 242. Phillips 1972, 130)[3], իսկ կիմերները՝ *գիմիրա* կամ *գիմիրի* (Капанцян 1947, 148. Дьяконов 1956, 237-238. Phillips 1972, 130)[4]: Ասուրական պետական բարձրաստիճան անձնավորություններից մեկին ուղղված նամակում խոսվում է Ուրարտու մուտք գործած կիմերների առաջնորդի մասին[5]: Համարվում է, որ Ռուսա I-ի՝ կուսակալություններին առնչվող բարեփոխումը կապված էր նաև կիմերական պատերազմի հետ (Дьяконов 1951, 337. Пиотровский 1959, 233): Հայտնի են արքայազն Սինաքերիբի կողմից Սարգոն II-ին հասցեագրված զեկույցները՝ կիմերների դեմ ուրարտական արքա Ռուսա I-ի անհաջող արշավանքի մասին (Deller 1984, 98-99, N 1.2. Иванчик 1996, 167-176 (N 1-3))[6]: Համանման բովանդակություն ունի Սարգոն II-ին ուղարկված Աշուրիսուայի հետախուզական զեկուցագիրը (Дьяконов 1951, 341 (N 50 (11)). Иванчик 1996, 176-179 (N 4)): Թեև կիմերների ներխուժումը կասեցնելուն ուղղված ռազմերթին մեծաքանակ զորք է մասնակցել (Parpola 1987, N 31 (8). Grekyan 2010, 87), այնուամենայնիվ, ճակատամարտը խիստ ծանր հետևանքներ է ունեցել ուրարտական տերության համար: Վանի թագավորության հիշյալ տիրակալի՝ կիմերների դեմ ուղղված այս անհաջող ռազմարշավի հավանական ժամանակը համարվում է մ.թ.ա. 714 թվականը (Иванчик 1990, 8, 16): Կիմերները հիշատակվում են նաև հետագայում՝ Սինաքերիբի ժամանակվա նամակներից մեկում և այլն: Ասարհադոնի արձանագրությունից հայտնի է դառնում, որ ասուրական արքան զենքով կոտորել է սկյութ Իշպակայի զորքը[7]: Պահպանվել են սեպագիր սալիկներ, որոնց վրա

---

[3] Հավանաբար, սկզբնապես սկյութ է կոչվել Առաջավոր Ասիա ներխուժած մի որոշակի ցեղախումբ, ըստ իր ինքնանվանման, իսկ հետագայում այդ անունն են տվել Հյուսիսային Կովկասից և մերձսևծովյան տարածաշրջանից Այսրկովկաս թափանցած տարբեր ցեղերի ընդհանրությանը:

[4] Ակկադական որոշ տեքստերում կիմեր անվանումը գործածվել է լայն նշանակությամբ, ներառելով միջինասիական սակերին. տե՛ս Иванчик 1999, 85: Հիշյալ եզրը կարող էր ունենալ նաև ընդհանրական նշանակություն, որի տակ նկատի էին առնվում հյուսիսային քոչվոր ցեղերն ընդհանրապես:

[5] Խոսքը Ասորեստանի պետական մունետիկին հասցեագրված Արադ/Ուրդա-Սինի նամակի մասին է. տե՛ս Дьяконов 1951, 339 (N 50 (8)). Deller 1984, 102, N 2.1 և այլն:

[6] Ուրարտական բանակը հավանաբար կազմված էր 13 նահանգապետերի, գլխավոր հրամանատարի (տուրտան) զորամիավորումներից և արքայական գնդից. տե՛ս Иванчик 1990, 5.

[7] Ենթադրություն է արվել, որ մանեացիները և նրանց դաշնակից սկյութները պարտություն են կրել Խուբուշկիայում, իսկ Իշպական զոհվել է. տե՛ս Luckenbill 1927, 207 (§ 517), 213, (§ 533). Strobel 2014, 376:

արձանագրված են Ասարհադոնի և Աշուրբանապալի ժամանակաշրջաններում արված հարցումները Շամաշ աստծո պատգամախոսին: Ասարհադոնն իր սուրհանդակին Խուբուշկիա ուղարկելու կապակցությամբ ուզում է իմանալ, թե կիմերները կամ սկյութները կհարձակվե՞ն նրա վրա (Иванчик 1996, 92, 218-221 (N 23)): Սկյութները հիշատակվում են Մարաստանի իրադարձությունների և Ասարհադոնի աղջկան Պարտատուային կնության տալու կապակցությամբ (Дьяконов 1951a, 228 (N 68, r)): Պարտատուայի անունն արձանագրված է Զիվիեի «գանձի» արծաթյա թիթեղներից մեկի վրա (Strobel 2012, 831):

Քննարկվող հարցի վերաբերյալ ուրարտական աղբյուրներն առայժմ ընձեռում են մեկ անուղղակի տվյալ: Ռուսախինիլիում գտնված կավե մի սալիկի սեպագիր արձանագրությունից հայտնի է դառնում, որ իշկուգուլյան արքան ուղևորվել է Մանա երկիր այն տարում, երբ Կիլբանիկայի տաճարում Խալդին հաստատել է Ռուսայի՞ն Ռուսախինայում (Дьяконов 1963, 38-39. Salvini 2012, 145): Հիշյալ արձանագրությունն ունեցել է մի շարք տարընթերցումներ, ուստի և բազմաթիվ մեկնաբանությունների առիթ է տվել: Ի. Դյակոնովը խնդրո առարկա հատվածը կարդում է այսպես. «...Շագան, ավագ որդին իշկուգուլյան արքայի, եկավ Մանա...»: Հ. Կարագյոզյանն առաջարկել է վերծանության իր տարբերակը. «...Շագայորդին հզոր՝ արքան Իշկուգուլխե (ցեղի), գնաց դեպի Մանա...»: Նրա կարծիքով, ուրարտական արձանագրությունում վկայված Շագայորդին համապատասխանում է հայ պատմագրության մեջ հիշատակվող Սկայորդուն (Կարագյոզյան 1984, 80): Ն. Հարությունյանի հիմնարար աշխատության մեջ քննվող տեքստը ստանում է հետևյալ տեսքը. «...Շագան, ավագ որդին Իշկուգուլխի (երկրի), եկավ Մանա (երկիր)» (Арутюнян 2001, 330-331 (N 412)): Կարևոր է նշել Մ. Սալվինիի առաջարկը՝ իշկուգուլյան անձնանունը կարդալ Շագապուտարա (Salvini 2001, 262. Salvini 2012, 145. Işik, Salvini 2015, 53): Անկախ սեպագրերի տարակերպ վերծանություններից՝ $^{m}$Šá-ga DUMU tar-a (Ի. Դյակոնովի կամ I տարբերակ), թե $^{m}$šá-ga-pu$_{x}$-tar-a կամ $^{m}$šá-ga-b/pu$_{x}$(TUR)-tar-a (Մ. Սալվինիի կամ II տարբերակ), մեզ հետաքրքրող անձնանվան հայերեն թարգմանությունը երկու դեպքում էլ նույնն է ստացվում՝ *Սակայորդի*: Բանն այն է, որ DUMU շումերական գաղափարագիրն ունի *որդի* իմաստը (Меликишвили 1960, 376. Дьяконов 1963, 93.), իսկ tara բառն ուրարտերենում ունի նաև *հզոր* նշանակությունը (Կարագյոզյան 1984, 78. Арутюнян 2001, 467): Այսինքն, արձանագրության վերծանության I տարբերակը կարելի է ընթերցել երկու ձևով. ա) «Շագան, ավագ որդին» (հետևելով Ի. Դյակոնովին), բ) «Շագայորդին հզոր» (հետևելով Հ. Կարագյոզյանին): Մյուս կողմից,

վերծանության II տարբերակը նույնպես կարող է ենթադրել երկակի թարգմանություն՝ կախված այն հանգամանքից՝ արդյո՞ք tara-ն դիտարկվում է կապակցությունից անջատ՝ առանձին բառի կարգավիճակում, թե՞ որպես $^{m}$šá-ga-pu$_{x}$-tar-a բարդ բառի երկրորդ բաղադրիչ: Այսպիսով, Մ. Սալվինիի (II տարբերակի) վերծանության I ենթատարբերակը կլինի $^{m}$šá-ga-pu$_{x}$ tar-a, թարգմանաբար՝«սակայորդին հզոր», եթե ճիշտ է մեր կռահումը pu$_{x}$ բառ-մասնիկի նշանակության վերաբերյալ (Թումանյան 2005, 30-31), իսկ II ենթատարբերակում կունենանք որպես ամբողջություն $^{m}$šá-ga-pu$_{x}$-tar-a բաղադրյալ բառը, որը պարզապես կարելի է թարգմանել «սկայորդի»: Տեղին է մեջ բերել Գ. Ղափանցյանի կողմից հայերեն *սկայորդի* (=սակ-տոհմից) բառի վերականգնումն ուրարտերեն համարժեքով՝ *šakaxi (Ղափանցյան 1940, 217): Ստացվում է, որ ուրարտերենում վկայված šaga=*šaka բառը նշանակում է *սակ*: Այսինքն, սեպագիր արձանագրության Սակայորդին, իրականում, կարող է համապատասխանել Խորենացու հիշատակած Սկայորդուն կամ, տառացի՝ Սակի որդուն: Մյուս կողմից, Պարույր=Պարտատուա համարժեքությունից բխում է, որ ասորեստանյան աղբյուրներում հիշատակված Իշպական համապատասխանում է «հայկական» Սկայորդուն (նաև՝ ուրարտական արձանագրության Սակայորդուն): Այսպիսով, ժամանակագրորեն իրար հաջորդող ուրարտական և ասուրական սեպագիր արձանագրությունները փոխադարձաբար հաստատում և լրացնում են իրար այն փաստի կապակցությամբ, որ սկյութական զորագնդերից մեկը մ.թ.ա. VII դարի 80-ական թվականների վերջում գտնվում էր Մանա երկրի տարածքում, դաշնակցելով այդ երկրի հետ՝ ընդդեմ Ասորեստանի:

Առաջին գլխի երկրորդ բաժնում բերվում են Աստվածաշնչի և պատմիչների հաղորդումները Հայկական լեռնաշխարհում կիմերների և սկյութների գտնվելու մասին: Ըստ ժողովուրդների աղյուսակի կամ էպոնիմների ցանկի, Ասքանազն ու Թոգարմա-Թորգոմը Նոյի թոռան և Հաբեթի որդու՝ Գոմերի, որդիներն են (Աստվածաշունչ, 9-10 (Ծննդոց, Ժ, 2-4)): Համաձայն Եզեկիելի մարգարեության, աստված խոստանում է Իսրայելի ժողովրդի դեմ ուղարկել «Գոմերը և նորա բոլոր գունդերը» (Աստվածաշունչ, 940 (Եզեկիել, ԼԸ, 6)), այսինքն՝ կիմերներին (Ադոնց 1972ա, 311. Ղափանցյան 1940, 218): Սկյութների վերաբերյալ հնագույն հիշատակություններից մեկը նույնպես հանդիպում է Հին կտակարանում: Երեմիա մարգարեին է վերագրվում Բաբելոնի դեմ ուղղված հետևյալ կոչը. «...հրափրեցէք նորա դեմ Արարատի, Միննիի և Ասքանասի թագավորությունները...» (Աստվածաշունչ, 883 (Երեմիա, ԾԱ, 27)), որտեղ «Ասքանազի թագավորություն» անվան տակ հասկացվում են սկյութները

(Ղափանցյան 1940, 218): Երեմիայի մարգարեությունում հիշատակված «Ասքանազի թագավորություն»-ը Խորենացու Հայոց պատմությունում փոխարինված է «Ասքանազեան գունդ» արտահայտությամբ, որն առավել բնորոշ է սկյութական տերունական կառուցվածքին: Աստվածաշնչում անդրադարձ է արվում նաև Ասորեստանի արքա Սինաքերիբի վախճանի հետ կապված հանգամանքներին, ում սպանելուց հետո Ադրամելեքը և Սարասարը փախչում են Արարատի երկիրը (Աստվածաշունչ, 458 (Թագավորաց, IV, ԺԹ, 36-37), 789 (Եսայի, ԼԷ, 37-38)):

Հունարեն հնագույն աղբյուրներն առասպելախառը տեղեկություններ են հաղորդում կիմերների մասին: Առաջինը Հոմերոսն է նրանց հիշատակում: Ոդիսևսը, «մեռյալների թագավորություն» ուղևորվելիս, նավով հասնում է օվկիանոսի սահմաններին, որտեղ «գտնվում են կիմմերացի մարդկանց քաղաքն ու երկիրը» (Ոդիսական, XI, 13-19):

Ըստ պատմահայր Հերոդոտոսի (մ.թ.ա. V դար), կիմերներն Ասիա են հասել իրենց բնակավայրերից սկյութների կողմից արտամղվելով, իսկ սկյութներն այդ տարածաշրջան են ներխուժել՝ հետապնդելով փախչող կիմերներին (Հերոդոտոս, I,15,103,104; IV,1,11,12; VII,20): Այս ավանդազրույցի հիմքում ընկած է պատմական այն իրողությունը, որ Առաջավոր Ասիայում կիմերական նվաճումները նախորդել են սկյութական արշավանքներին:

Հին Հայաստանում բնակվող «սկյութիններին» հիշատակող հաջորդ պատմիչը Քսենոփոնն է (մ.թ.ա. V-IV դարեր): Նրա վկայությունները ծանրակշիռ են ու արժանի են ուշադրության, քանի որ որպես նահանջող բանակի զորահրամանատար, ի շարս բազմաթիվ հայկական գավառների, Քսենոփոնն անցել է նաև իրար թշնամի երկու ցեղերի բնակեցրած տարածքներով (Քսենոփոն, IV,VIII,18-20), որոնք, հավանաբար, կիմերական և սկյութական ցեղախմբերի հետնորդներն էին:

Դիոդորոս Սիկիլիացու (մ.թ.ա. I դար) հեղինակած «Պատմական գրադարան»-ում սկյութական ցեղերի շարքում թվարկվում են սակերը, մասագետները, սավրոմատները: Նա կարծում է, որ սկյութները փոքր թվով բնակվելիս են եղել Արաքս գետի ափին (Դիոդորոս, գիրք 2, 43):

Հույն աշխարհագիր Ստրաբոնը (մ.թ.ա. I – մ.թ. I) պատմում է դեպի Փոքր Ասիա կիմերների արշավանքների մասին, որոնց ընթացքում նրանք հարձակվել են Պափլագոնիայի և Փռյուգիայի վրա, ինչ-որ ժամանակ հասնելով մինչև Լիդիա ու Հոնիա (Страбон, I,3,21; III,2,12, XI,2,5): Ըստ Ստրաբոնի, հին հույն պատմագիրները հյուսիսային ժողովուրդներին կոչում էին *սկյութ* ընդհանրական անունով, իսկ Կասպից ծովից անդին ապրող ցեղերի մի մասին անվանում էին սակեր, մյուսներին՝ մասագետներ, որոնցից «սակերը...Հայաստանում տիրացան

լավագույն հողերին, որին թողեցին իրենց անունը՝ Սակասենե...» (Страбон, XI,6,2; XI,8,2; XI,8,4):

Սկյութների պատմական ասպարեզից հեռանալուց հետո էլ նրանց մասին հիշողությունները չեն մարում: Բյուզանդական պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին մ.թ. VI դարում, խոսելով Իլլիրիայի և Թրակիայի ամայանալու մասին, դրանք համեմատում է «սկյութական անապատի» հետ: Նա հիշատակում է նաև Սկյութոպոլիս (Բեթ ս/շան) քաղաքը (Պրոկոպիոս, 95, 125):

Հայ պատմական ավանդությունը հարցին յուրօրինակ մոտեցում է ցուցաբերում: Մեր պատմագիրները, հաճախ, կիմերներին և սկյութներին դիտում են որպես ազգակիցներ՝ նույնացնելով նրանց հայերի հետ: Կորյունը, խոսելով Հայաստան աշխարհի և *ասքանազյան* ազգի աստվածապարգև գրի մասին, ակնհայտորեն նկատի ունի հայոց ազգը (Կորյուն, 22):

Խորենացին Նոյի որդուն և վերջինիս ժառանգներին թվարկում է հետևյալ հաջորդականությամբ՝ Հաբեթ, Գամեր/Գոմեր, Թիրաս, Թորգոմ[8], Հայկ (Խորենացի, I, Ե, Թ, ԺԲ): Պատմահայրը մեկ այլ տեղում (I, ԻԲ) գրում է. «Բայց արդ ես առ օտարաց թագաւորութեամբն կացեալ՝ ընդ նոցայն զմերս ազգի ածից զկարգ թագաւորացն, զի մերոյ աշխարհիս բնիկք պսակաւորք արք այնոքիկ, զորոց զանուանսն ի ներքոյ դրոշմեսցուք»: Թվարկելով հայոց այն թագավորներին, ովքեր իրեն առավել սիրելի են՝ իբրև բնիկներ և արյունակիցներ, նա առաջինը հիշատակում է Սկայորդու որդի Պարույրին, այլ խոսքով՝ սկյութների առաջնորդ Պարտատուային (Ղափանցյան 1944, 84-85): Ըստ երևույթին, հիշատակվում է նաև Պարտատուայի որդի Մադեսը՝ տարբեր համատեքստերում. մի դեպքում, որպես Հայկյան Արամի հակառակորդ՝ Նյուքար Մադես անունով (Խորենացի, I, ԺԳ)[9], մեկ այլ տեղում (I, ԻԲ)՝ որպես Պարույրի որդի Հրաչյա, ով այդպես էր կոչվում *պայծառ երես և բոցավառ աչքեր* ունենալու համար:

Ագաթանգեղոսն իր «Պատմության» մեջ հիշատակում է կիմերական և սկյութական ցեղախմբերի կամ նրանց ժառանգորդների հետ կապված մի շարք տեղանուններ՝ «դրունս Ալանաց, կողմանս Գամրաց, Մասքթաց կողմս, սահմանս Մասքթաց» (Ագաթանգեղոս, Բ, ՂԴ, ՃԻ, ՃԻԶ):

---

[8] Հայոց ազգածագման «թորգոմյան» վարկածի վերաբերյալ տե՛ս Քոսյան 1998, 5-10 և հտն:

[9] Ըստ պատմիչի, Մադեսն առաջնորդում էր մարերին, որոնք քուշանների նման ասպատակելով՝ սմբակներով ոտնակոխ արին Հայաստանի սահմանները: Հնարավոր է, որ Նյուքար Մադեսը սկյութական արքա Մադիոսի աղոտ վերհուշն է. տե՛ս Дьяконов 1968, 185, прим. 296. Тер-Мартиросов 1995, 42.

Ըստ Մովսես Կաղանկատվացու, Ասքանազը և Թորգոմը (իմա՝ սկյութների և հայերի նախահայրերը - ԳԹ) եղբայրներ են (Կաղանկատվացի, I, Բ): Գրիգոր քահանայապետի մասին պատմիչը գրում է, որ աստված նրան «հանձնեց Թորգոմյան երկրին, Ասքանազի սերնդին» (Կաղանկատվացի, I, ԺԴ):

Սկյութիայի, Սարմատիայի, Մասքութների և Սակե երկրամասերի վերաբերյալ տեղեկություններ կան Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ում, որտեղ հիշատակվում են նաև մասքութ ժողովուրդը, մասագետացիները, ալանները և այլն (Շիրակացի, 258-312): Հայ պատմագրության մեջ կան նաև ուշ հիշատակություններ Սարմատների, Գամիրքի (Դրասխանակերտցի, 11-12) կամ «Գամրաց տան», «Մազքրթաց աշխարհ»-ի, Սկյութիայի ու տուհերի մասին (Վարդան Արևելցի, 17, 23, 37, 69-70. Թումանյան 2012, 199):

Առաջին գլխի երրորդ հատվածաբաժնում տրվում է քննարկվող հիմնախնդրի պատմական համառոտ ակնարկը: Առավել հավաստի է համարվում, որ կիմերների ներխուժումներն Առաջավոր Ասիա կայացել են մ.թ.ա. 714 թվականից ոչ ուշ, երբ նրանք արդեն հասել էին Ուրարտուի սահմաններին (Թումանյան 2019, 225): Առաջավոր Ասիա արշավելիս սկյութական հեծյալ ջոկատները, հավանաբար, համալրվել են այլէթնիկ բնակչության ձիավորների խմբերով (Смирнов 1966, 16): Այս քոչվոր ցեղախմբերի ներխուժումը Հայկական լեռնաշխարհ հանգեցրեց Վանի թագավորության թուլացմանը (Дьяконов 1951б, 29-30. Пиотровский 1959, 235, 240-241, 256. Туманян 2014, 113): Ուրարտական քաղաքների անկման պատճառներից մեկն էլ հրոսակների կողմից դրանց ջրամատակարարման համակարգերի և ոռոգման կառույցների ավերումն էր (Тирацян 1979, 160. Tumanyan 2021, 256): Այնուամենայնիվ, կիմերների և սկյութների արշավանքները ի վիճակի չէին ամբողջովին դադարեցնել Ուրարտուի պետական կենսագործունեությունը (Дьяконов 1951б, 30, 39. Пиотровский 1959, 232-233): Ենթադրվում է, որ մ.թ.ա. VII դարի երկրորդ կեսում սկյութները վերադառնում են մերձսևծովյան տափաստաններ (Лесков 1981, 109):

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
## ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԴԱՄԲԱՆԱԽՄԲԵՐԸ, ՈՐՈՆՔ ԿԱՐԵԼԻ Է ՎԵՐԱԳՐԵԼ ԿԻՄԵՐԱ-ՍԿՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ

Երկրորդ գլուխը կազմված է երեք բաժնից: Դրանցից առաջինում շարադրվում են Հայքի կիմերա-սկյութական մշակութային ընդհանրությունը ներկայացնող դամբարանների ընտրության սկզբունքները: Նշվում

է, որ քննարկվելու են Հայկական լեռնաշխարհի արևելքի մ.թ.ա. VIII դարի վերջ – VI դարի երրորդ քառորդով թվագրվող այն դամբարանները, որոնցում ամփոփված հիմնական ննջեցյալները (հեծյալ) ռազմիկներ են: Այլ խոսքով՝ դրանք պետք է լինեն տղամարդկանց թաղումներ (անհատական կամ խմբային), որոնք, որոշ դեպքերում, կատարվել են տեղական ավանդույթներին օտար դամբանային կառույցներում և որոնցում առկա են, ասենք, հուշակոթողների համապատասխան տիպեր, մարդու կամ ձիու զոհաբերություն, իսկ ուղեկցող գույքի կազմում՝ զենք ու զրահ, ձիասարք, տղամարդու աշխատանքի գործիք կամ բնութագրող այլ հատկանիշ: Սկյութական թաղումներում հաճախ են հանդիպում ուրարտական, էթիունյան, ասուրական, իրանական, փռյուգական, եգիպտական մշակույթներին պատկանող առարկաներ: Մեր ընտրանքի մեջ են մտել միայն այն դամբարանները, որոնցում համատեղ առկա են եղել կիմերական կամ սկյութական թաղումներում հանդիպող առնվազն երեք հատկանիշ, այդ թվում՝ գոնե մեկ բնորոշիչ հատկանիշ: Այս դեպքում մենք զերծ ենք մնացել մի խումբ հետաքրքիր համալիրներից հրաժարվելու անհրաժեշտությունից: Թեև վիճակագրական վերլուծությունները պարզ ներկայացնելու նպատակով յուրաքանչյուր հատկանիշի տրվել է միավոր արժեք, ինքնըստինքյան հասկանալի է, որ դրանք իրականում չեն կարող հավասարարժեք լինել: Նույնիսկ բուն սկյութական հատկանիշները, ինչպիսիք են սկյութական տիպի մարդակերպ մահարձանները, մեջքի վրա ձգված դիրքով թաղումները, եղջերագավաթները, ակինակները, բոլորատեգերը կամ սկյութական տիպի նետասլաքները, տվյալ փակ համալիրի մշակութային պատկանելության բնորոշման հարցում հավասար «կշիռներ» չեն կարող ունենալ: Օրինակ, որոշակի ատրիբուտներով օժտված մարդակերպ քարե արձանի կամ մեջքի վրա ձգված դիրքով կմախքի առկայությունը խոսուն վկայություն է դամբարանի մշակութային պատկանելության վերաբերյալ, մինչդեռ առանձին սկյութական նետասլաքի հայտնաբերումը դեռ չի նշանակում, որ գործ ունենք հատկապես սկյութական թաղման հետ:

Երկրորդ գլխի երկրորդ հատվածաբաժինը հատկացված է ընտրված հատկանիշների համատեքստում որոշ դամբարանների մշակութային պատկանելության նոր մեկնաբանությանը: Բանն այն է, որ ակնհայտ կիմերական կամ սկյութական հատկանիշներով օժտված և հետազոտողների կողմից ընդհանրական մ.թ.ա. VIII դարի վերջ – VI դարով թվագրվող հնագիտական բազմաթիվ փակ համալիրների զուգահեռները կարելի է գտնել մ.թ.ա II հազարամյակի վերջ – I հազարամյակի սկզբով թվագրվող դամբանային համալիրներում: Հիշյալ համալիրների համաժամանակացման հարցում առկա հակասությունը հարթելու համար

կարիք առաջացավ անդրադառնալ վաղ համարվող այն հնագիտական հուշարձանների թվագրության խնդիրներին, որոնք իրենց կառուցված-քով, թաղման ծիսակարգով կամ գույքի տիպաբանական կազմով նման են կիմերա-սկյութական մշակութային ընդհանրությանը պատկանող դամբանային համալիրներին (Туманян 2019, 26):

Հայկական լեռնաշխարհի վաղերկաթեդարյան համարվող մի շարք փակ համալիրների «երիտասարդացման» անհրաժեշտությունը նախկի-նում ընդգծվել է Բ. Կուֆտինի, Ա. Յեսսենի, Յու. Վորոնովի, Մ. Պոգրեբովայի, Ա. Տերենոժկինի աշխատություններում: Վերջինս իրավա-ցիորեն քննադատել է ադրբեջանցի հնագետների ձգտումը՝ որոշակի արտեֆակտերի հայտնաբերման փաստերը միտումնավոր կերպով ան-տեսելու միջոցով հասնել հնագիտական համալիրների առավել վաղ թվագրմանը: Մյուս կողմից, չի կարելի համաձայնվել այն կարծիքի հետ, իբր Անդրկովկասում բրոնզի և երկաթի դարերի սահմանաբաժանը մ.թ.ա. VII դարն է (Тереножкин 1971, 80-81, 83)[10]: Հետաքրքիր է, որ այս եզրակացությունն արվել է Գետաբեկի N 48 դամբարանի, Մինգեչաուրի թաղումների և այլ հնագիտական հուշարձաններից հայտնի արտեֆակտերի ուսումնասիրության հիման վրա, որոնք բոլորն էլ, հենց հեղինակի հավաստմամբ, պատկանում են սկյութական մշակույթին, այսինքն՝ Այսրկովկաս բերվել են դրսից: Մ. Պոգրեբովան մ.թ.ա. VIII-VII դարի առաջին կեսը համարում է «Հարավային Կովկասում ուշ բրոնզ/վաղ երկաթի դարաշրջանի եզրափակիչ փուլ» (Погребова 2011, 208): Նույն սխալն են կրկնում Ե. Չերնենկոն և Ս. Մախորտիխը: Գրախոսելով Ս. Եսայանի և Մ. Պոգրեբովայի հեղինակած «Անդրկովկասի սկյութական հուշարձանները» աշխատությունը, այդ գրքում քննարկվող իրողություն-ները նրանք վերագրում են «վաղ երկաթի դարաշրջանի սկզբին» (Черненко, Махортых 1986, 226): Մոռացության է տրվում այն էական հանգամանքը, որ նախքան կիմերա-սկյութական մշակութային ընդհանրության ներթափանցումը, Հայկական լեռնաշխարհի հասարա-կությունն արդեն թևակոխել էր իր զարգացման այն փուլը, որը պատմագիտությունում ընդունված է անվանել պետական կազմա-վորումների, իսկ հնագիտության մեջ՝ երկաթի լայն տարածման դարաշրջան: Վաղ երկաթի դարաշրջանի ժամանակագրումը մ.թ.ա. II հազարամյակի վերջին և մ.թ.ա. I հազարամյակի առաջին դարերով ոչ թե «հնագիտական առասպել է տվյալ տարածաշրջանում երկաթի դարաշրջանի խոր հնության վերաբերյալ», ինչպես կարծում էին որոշ հետազոտողներ (Тереножкин 1971, 83. Воронов 1980, 218), այլ

[10] Հմմտ. Արևելյան Եվրոպայում մ.թ.ա. VIII-VII դդ. «երկաթե գործիքների լիակատար տիրապետության հաստատման» մասին կարծիքի հետ. տե՛ս Смирнов 1966, 14:

հավաստի գիտական իրողություն: Մ.թ.ա. IX-VIII դարերում Հայաստանում հաստատուն անցում է կատարվել երկաթի արտադրությանը (Мартиросян 1956, 83): Բրոնզից պատրաստված զենքը նվիրաբերվել էր տաճարներին, ուրարտական բանակը սպառազինված էր երկաթե զինատեսակներով (Редер 1987, 150): Հայաստանի մ.թ.ա. VII-VI դարերի հնագիտական մշակույթների շարքում կիմերա-սկյութական մշակութային ընդհանրության գոյությունը չի կարելի անտեսել: Յուրաքանչյուր ուսումնասիրող, ով չի «նկատի» մեր տարածաշրջանում բերովի մշակութային շերտ(եր)ի առկայությունը, կհանգի հակասության, քանի որ ստիպված պիտի լինի ընդունել, որ մ.թ.ա. VII-VI դարերում, այսինքն՝ պետական կազմավորումների կամ երկաթի լայն տարածման դարաշրջանում Հայկական լեռնաշխարհում միաժամանակ շարունակում էր գոյատևել նաև բրոնզի դարաշրջանը:

Շեշտվում է, որ թվագրության հարցերում նման խառնաշփոթի պատճառը հնագիտական համալիրների գիտական պատշաճ մակարդակով հրատարակությունների բացակայությունն է: Սակայն, նույնիսկ այդ պայմաններում կարելի կլիներ խուսափել լուրջ վրիպումներից, եթե քննարկման առարկա դառնար հնագիտական համալիրը՝ բոլոր բաղադրիչներով հանդերձ, ոչ թե միայն ուղեկցող գույքը: Բերված օրինակները ցույց են տալիս, որ տիպաբանության վրա հիմնված ցանկացած թվագրություն մշտապես ճշգրտման կարիք կունենա, քանի դեռ քննարկվող տարածաշրջանում հստակ չեն սահմանազատվել տվյալ դարաշրջանի հնագիտական մշակույթները: Ընդհանուր առմամբ, մեզ արդարացի է թվում տեսական այն դրույթը, որ պատմա-մշակութային արժեք ունեցող տիպեր ստանալու համար պետք է ելնել կոնկրետ հնագիտական մշակույթից (Клейн 1991, 121, 243-244):

Պետք է հրաժարվել նաև միջինացման սկզբունքից, երբ հնագետը, նշելով որևէ փակ համալիրի հնարավոր գոյատևման ստորին և վերին ժամանակագրական սահմանները, որպես այդ համալիրի կազմավորման հավանական ժամանակամիջոց ընտրում է դրանց միջին թվաբանականը: Այնինչ՝ անխաթար փակ համալիրների համար պետք է թվագրող հանդիսանան ուշ ժամանակագրություն ունեցող առարկաները կամ իրողությունները:

Երկրորդ գլխի երրորդ բաժինը նվիրված է կիմերա-սկյութական մշակութային ընդհանրության հատկանիշներով դամբանախմբերի ուսումնասիրությանը: Պատմական Հայաստանի արևելքում դրանք զգալի թիվ են կազմում: Անկախ այն հանգամանքից, դամբարանները պատահական են հայտնաբերվել, թե գտնվել են հնագիտական տեղազննությունների և պեղումների արդյունքում, մենք պայմանակա-

նորեն ընդունել ենք, որ դամբանախումբը կարող է կազմված լինել մեկ կամ մեկից ավելի դամբաններից: Թվարկվում են Արագածոտնի, Շիրակի, Տավուշի, Վարաժնունիքի, Վերին Տաշիրի, Դեբեդի ավազանի, Լալվարյան խմբի, Ծոբոփորի, պատմական Քուիշափոր գավառի, Դմանիքի, Մազազի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Սյունիքի, Արցախի, պատմական Փառնես գավառի, պատմական Հրաքոտ-Պերոժ գավառի, Ուտիքի, պատմական Գարդման գավառի 60 դամբանախմբերի թաղման համալիրները:

Կիմերա-սկյութական մշակութային ընդհանրությանը բնորոշ 144 դամբանային համալիրներից յուրաքանչյուրը ներկայացվում է առանձին (Թումանյան 2001. Թումանյան 2010 և այլն): Նշվում է դամբանախումբը, դամբարանի համարը, նկարագրվում են դամբանային կառույցը, թաղման ծիսակարգը, մարդկանց և կենդանիների զոհաբերությունները, ուղեկցող գույքը: Հատուկ ուշադրություն է դարձվում ներթող/իջեցուկ թաղումներին:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
## ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍԻ ԿԻՄԵՐԱ-ՍԿՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐՈՎ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԸ

Երրորդ գլուխը բաղկացած է չորս բաժնից: Առաջին բաժնում համակողմանիորեն ուսումնասիրվում են ընտրանքի մեջ մտնող դամբանային համալիրներում թաղման ձևի[11], կառույցի, ծիսակարգի, զոհաբերությունների բնորոշ տիպերը: Այսօր էլ արդիական է այն միտքը, որ սկյութական հիմնախնդրի պարզաբանման գործում հարկ է կարևոր դեր վերապահել թաղման ծեսին (Артамонов 1947, 81):

Կիմերա-սկյութական մշակութային ընդհանրությանն առնչվող Հայաստանի դամբանախմբերում որոշակի թիվ են կազմում ներթող/իջեցուկ թաղումները: Իրենց ննջեցյալներին թաղելու նման ձևի ընտրության տրամաբանական բացատրություններից մեկը հուղարկավորողների մշտական բնակավայրի բացակայությունն է: Դամբանասրահի կառուցվածքում կոր պատի առկայությունը հուշում է սկյութական մշակույթում թաղման և բնակելի համալիրների գաղափարաբանական միասնությունը (Թումանյան 2017, 162): Սկյութական թաղման ծեսին առնչվածությունը կարող է հուշել մարդ պատկերող մահարձանի առկայությունը դամբանային համալիրի կազմում (Раевский 1985, 78, 140-

[11] «Թաղման ձև» ասելով, նկատի ունենք հանգուցյալի հարաբերվածությունը դամբանային համալիրին: Եթե հուղարկավորման համալիրը չի կառուցվել հատկապես տվյալ ննջեցյալի կամ նրա ընտանիքի անդամների համար, ապա նման թաղումը կոչվում է ներթող կամ իջեցուկ:

142)[12]: Կիմերական և սկյութական մարդակերպ արձանները տվյալ տարածքում հիշյալ ցեղախմբերի երբեմնի առկայությունը վկայող իրողություններ են (Ильинская 1983, 56): Հուշակոթողն ընկալվում էր որպես երկինք տանող ճանապարհ: Այն վերածննդի կամ անմահության գաղափարի կրողն էր (Թումանյան 2011, 223):

Դիաթաղման եղանակը տարբերակման ցուցիչ չի կարող ծառայել կիմերական ու սկյութական դամբարանների և տեղական թաղումների միջև: Այլ է՝ կմախքի մեջքի վրա ձգված դիրքը, որը բնորոշ է սկյութասակական թաղման ծիսակարգերին: Ուշադրության է արժանի այն փաստը, որ Մինգեչաուրի դամբանադաշտում (Ուտիքում) նախկին կծկված դիաթաղումներին մ.թ.ա. VII դարում (ամբողջությամբ) փոխարինում են մեջքի վրա ձգված դիրքով սկյութական թաղումները (Казиев 1949, 20. Асланов и др. 1959, 117-118): Թաղման ծիսակարգի կարևոր բնութագրիչներից է աճյունի հանգչելատեղը: Հայկական լեռնաշխարհում ի հայտ է գալիս մի նոր երևույթ, որը չի հանդիպում էթիունյան թաղման ծեսում: Խոսքը վերաբերում է սկյութական որոշ դամբարաններում հայտնաբերված տաշտաձև զետեղարաններին, որոնք հետազոտողների կողմից ընկալվում են որպես դիակալներ (Tumanyan 2017, 199-200): Գուգարքի, Սևանի ավազանի և Սյունիքի դամբանադաշտերի ուսումնասիրությամբ կարելի է եզրակացնել, որ մի շարք դեպքերում հուղարկավորություններն ուղեկցվել են մարդկանց զոհաբերություններով (Դևեջյան 2006, 85. Լալայան 1910, 68. Мартиросян 1954, 110):

Կիմերական և սկյութական թաղումների համար հարկ է առանձնացնել այլ էական բնութագրիչներ ևս՝ կապված կենդանիների զոհաբերության հետ: Առաջինը ձիու և/կամ ձիասարքի տեղադրումն է դամբարանում: Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. VIII դ. վերջ - VI դարերի դամբարաններում ձիու և մարդու համատեղ թաղումների զգալի ավելացումը, որը նշանավորում է թաղման ծեսում փոփոխությունների նոր փուլ (Мартиросян 1954, 99. Алиев 1979, 5-7), հավանաբար, կապված է էթնիկական նոր խմբերի ներխուժման հետ: Հուղարկավորումներն ուղեկցվել են նաև շան կամ գայլի զոհաբերությունով:

Երրորդ գլխի երկրորդ հատվածաբաժնում ներկայացվում է կիմերական և սկյութական դամբանների թաղման գույքը: Հայաստանի նման հավաքածոներում նախկինում օրինաչափ է համարվել տղամարդկանց աշխատանքի գործիքների բացակայությունը (Марти-

[12] Էթիունյան թաղման համալիրներին բնորոշ են պրիզմայաձև մենաքարերը, որոնք տարածված են Հայաստանի վաղերկաթեդարյան դամբարանադաշտերում. տե՛ս Թումանյան 2003, 177-179:

росян 1954, 22. Халилов 1971, 186): Այս դրույթն այժմ վերանայելու կարիք ունի: Ի մի բերելով հնագիտական պեղումներով ստացված տվյալները (այդ թվում՝ հարցին առնչվող պատկերագրությունը) և հաշվի առնելով գրավոր աղբյուրների տեղեկությունները, դիտարկվել են կիմերա-սկյութական մշակութային ընդհանրությանը բնորոշ թաղման գույքի բաղադրիչները: Դրանք են՝ ձիասարքը, մասնավորապես՝ ասպանդա-կաձև կամ 8-աձև ծայրերով բրոնզե կամ երկաթե լկամները, զենք ու զրահը՝ դաշույնները և սրերը, խողովակակոթառ նիզակները, կոր դանակները[13], բրոնզե գոտիների որոշ տիպերը, սկյութական նետա-սլաքները, բոլորատեգերը, քլունգաձև կացինները[14], ակինակները, գուրզերը, երկժանիները: Աշխատանքի գործիքների թվում դիտարկվել են փոքր կամ մեծ տնտեսական դանակները, կախոցակով սրոցաքարերը, բիզ-հերյունները, ասեղ-մախաթները, հարթ կացինները: Սրանց հաջորդում են պերճանքի առարկաների մի քանի տեսակները, շիգղերը, ոսկրե կամ մետաղյա զարդախողովակները, մետաղյա մանյակները, շքասեղ-ծամկալները[15], երկծալ, ողկուզավոր կամ ներճկված ապարան-ջանները, ճակատակալները, բրոնզե հայելիները: Կենցաղային իրերից քննարկվել են քարե, մետաղյա, փայտե թասերը կամ դույլերը, կենդանակերպ կանթ, կափարիչ, ծորակ, զարդ ունեցող անոթները, կենդանակերպ անոթները, տափաշշերը, ասկոսները: Առանձին սյունակներ են հատկացվել կոյաբզեզաձև ու սկյութական ոճի կնիքների և այլ իրերի համար (Tumanyan 2010, 192): Նկատենք, որ իրերի մի մասը դիտավորյալ վնասվել-ջարդվել է՝ երևույթ, որը միայն եվրասիական քոչվորների «մենաշնորհը» չէ (Թումանյան 2010ա, 153-155): Հասկանալի է, որ առաջարկվող համակարգն իր բնույթով բաց է ցանկացած անհրաժեշտ փոփոխության համար: Ուշագրավ է այն իրողությունը, որ Վանի թագավորության դարաշրջանում պատմական Հայաստանի քննարկվող դամբարաններում հայտնաբերվել են բրոնզե բազմաթիվ զենքեր: Այսպես, բրոնզից են պատրաստված հայտնի միակ ակինակը (100,00 %), 14 բոլորատեգերից 6-ը կամ հիշյալ զենքերի ընդհանուր թվի 42,86 %-ը, 134 դաշույններից և սրերից 39-ը (30,71 %), 159 նիզակներից 14-ը (8,81 %) և այլն: Սա ծանրակշիռ փաստարկ է հօգուտ այն տեսա-կետի, որ երկաթի լայն տարածման դարաշրջանում Հայկական լեռնաշ-

---

[13] Սրանց «մանգաղաձև» տեսակները հանդիպում են նաև կանանց թաղումներում. տե՛ս Թումանյան 1993, 136, 139, աղ. I,12:

[14] Հ. Մարտիրոսյանը սրանց անվանում է «սկյութական տիպի մարտական կացնիկ». տե՛ս Мартиросян 1954, 72, таб. XV,10:

[15] Խոսքը վերաբերում է կոնաձև կամ բրգաձև գլխիկով շքասեղներին. տե՛ս De Morgan 1889, 120-121, fig. 92-97. Այս տիպի առարկաներին Բ. Կուֆտինն անվանում է շքասեղ-բզեր (Куфтин 1941, 48, рис. 46,1-6):

խարի ներթափանցած ցեղախմբերը գտնվում էին զարգացման ավելի ցածր մակարդակի վրա, քան տեղաբնիկները: Այս եզրահանգումը բխում է նաև մարդկանց զոհաբերությունների առկայության վերաբերյալ վերն արված դիտողությունից:

Այս գլխի երրորդ ենթագլխում դիտարկվում են խեցեղենի բնորոշ տեսակները: Յուրաքանչյուր տարածաշրջանում թաղման ոչ հարուստ համալիրների գույքի կազմում առկա խեցանոթները, սովորաբար, համարվում են տեղական արտադրանք (Иессен, Пиотровский 1940, 31): Այդ պատճառով, խեցեղենի մշակութային պատկանելության խնդիրը, հաճախ, բաց է մնում: Քանի որ որևէ մշակութային միջավայրում, այլ փոփոխությունների բացակայության պայմաններում, դրան ոչ հատկանշական կավանոթների ի հայտ գալը կարող է վկայել օտար կանանց ներկայությունը (Смирнов 1971, 189)[16], ապա մշակութային ակնհայտ փոփոխությունների պայմաններում խեցեղենի արտադրության որոշակի ավանդույթների պահպանությունն արդեն հնարավոր է բացատրել հին մշակույթը կրող կանանց առկայությամբ: Մինչդեռ խեցեղենի բնույթի, ձևի, զարդաբանվածքի փոփոխությունը՝ մշակութային մյուս բաղադրատարրերի հետ միասին, կարող է կապված լինել էթնիկական զանգվածի արական հատվածի փոփոխությունների հետ: Սկյութական դարաշրջանում Հայաստանում ի հայտ են գալիս ելունդներից սկսվող ճառագայթաձև գծերով զարդաբանված գնդաձև իրանով, նեղվիզ, ելուստավոր կանթերով օժտված սափորներ, որոնք իրենց նախնական տիպերը չունեն նախորդ ժամանակաշրջանում: Ակներև է դառնում կենդանակերպ խեցանոթների կամ կենդանու գլուխ հիշեցնող կանթերով կավամանների առատությունը: Հայկական լեռնաշխարհի սկյութական տիպի համալիրներում հայտնաբերված եղջերագավաթները և պտկաձև, ոտքի ձև ունեցող կամ «սրածայր» հիմքով անոթներն առայժմ մեծ թիվ չեն կազմում: Սկյութական մշակույթին դրանց պատկանելությունը կասկած չի հարուցում, քանի որ դրանք զգալի քանակությամբ հանդիպում են սկյութական մարդակերպ մահարձանների պատկերագրություններում (Елагина 1959, 195. Власова 2000, 51-52, рис. 1, 2): Հետևություն է արվում, որ Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. VII-VI դարերին վերագրվող հնագիտական համալիրներում առկա զենքի և ձիասարքի հավաքածոների հետ միասին, սկյութական մշակույթի կարևոր բաղադրիչներից է նաև խեցեղենը: Այս ենթագլխում փորձ է արվում ապացուցելու, որ սկյութական մշակույթը քննարկելիս մշակութակազմիչ հնագիտական համալիրներին բնորոշ

[16] Առօրյա գործածության խեցեղենը սկյութական ընտանիքներում, ավանդաբար, պատրաստում էին կանայք. տե՛ս Смирнов 1966, 131. Ковалевская 1984, 44.

խեցանոթների տեսականին չի կարելի անտեսել: Խեցեղենի բնույթը, ձևը, զարդաբանվածքը և այլ հատկանիշները կարող են մշակութային (և էթնիկական) փոփոխությունների դիտարկման կարևոր աղբյուր լինել:

Չորրորդ հատվածաբաժնում գրաֆիկորեն ներկայացվում է դամբարանների բաշխվածությունն ըստ հատկանիշների քանակի: Մեզ հետաքրքրող դամբարանները կամ դամբանադաշտերն առանձնացնելու նպատակով ընտրել ենք կիմերա-սկյութական թաղման ծեսերին բնորոշ 40 հատկանիշ, որոնց հիման վրա ստացել ենք դամբարանների բաշխվածության գրաֆիկը (Թումանյան 2021ա, 240): Այն դիտարկելիս պարզվում է, որ մեկ դամբարանում առկա հատկանիշների առավելագույն թվաքանակը 17 է: Այդքան հատկանիշ ունի միայն 1 թաղման համալիր՝ Կարճաղբյուրի N 28 դամբարանը: Դա կազմում է քննարկվող դամբարանների ընդհանուր թվի 0,65 %-ը: Մեր ընտրության համաձայն, նվազագույն (3) հատկանիշներ են գրանցվել 14 դամբարանում (9,03 %): Առայժմ 18 կամ ավելի հատկանիշ ունեցող դամբարան չի գրանցվել:

Իրար գումարելով ըստ հատկանիշների քանակի խմբավորված դամբարանների թվի ու համապատասխան հատկանիշների թվաքանակի արտադրյալները և ստացված գումարը (=1017) բաժանելով քննարկվող դամբարանների թվի (144) վրա, կստանանք հատկանիշների միջին թվաբանականը՝ 7,06: Այսինքն, յուրաքանչյուր դամբարանում, միջին թվով, առկա է կիմերական կամ սկյութական թաղումները բնորոշող, մեր կողմից ընտրված 40 հատկանիշից ընդամենը 7,06-ը կամ 17,65 %-ը: Այսպիսով, Հայկական լեռնաշխարհում կիմերա-սկյութական մշակութային ընդհանրությանը պատկանող յուրաքանչյուր դամբանային համալիր, միջին հաշվով, ներկայացված է մոտավորապես 7 հատկանիշով[17]:

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
## ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ՏՎՅԱԼՆԵՐ

Չորրորդ գլուխը կազմված է երեք բաժնից: Առաջին բաժնում ներկայացվում են տեղեկություններ այլ դամբանախմբերի վերաբերյալ: Վերը ներկայացված դամբանախմբերում, բացի մեր կողմից ընտրված դամբանային համալիրներից, կան նաև կիմերական կամ սկյութական հատկանիշներով բազմաթիվ դամբարաններ, որոնք տեղ չեն գտել հիմնական ցուցակում: Պատճառն այն է, որ համապատասխան

[17] Հարկ է նկատել, որ որոշ գիտական հրատարակություններում բացակայում են տվյալները թաղման ծիսակարգի մի շարք կարևոր բաղադրիչների վերաբերյալ: Մինչդեռ՝ որևէ դամբանային համալիրի պեղումների վերաբերյալ թեկուզ փոքրածավալ հաղորդագրությունը, նախ և առաջ, տեղեկատվություն է դրանում ամփոփված հանգուցյալ(ներ)ի մասին. տե՛ս Թումանյան 2007, 138:

հրատարակություններում դրանք ներկայացված են համախմբությամբ և հնարավոր չէ եղած տվյալները վերագրել կոնկրետ այս կամ այն թաղման համալիրին: Նման դամբանախմբերն առայժմ 11-ն են: Դրանց պայմանականորեն անվանել ենք «այլ դամբարաններ», ընդունել ենք որպես առանձին միավոր և չենք ընդգրկել քննարկվող դամբանային համալիրների ցանկում, քանի որ մեկ տողով ներկայացվող դամբարան-ների խումբը չի կարող համաչափելի լինել մեկ դամբարանին՝ թե՛ քանակական, թե՛ որակական առումներով: Սակայն դրանց ընդհան-րապես չանդրադառնալ լոկ անհամաչափելիության պատճառով նույնպես չի կարելի, քանի որ դա կնշանակեր տվյալ դամբարանադաշտը թերի ներկայացնել և անտեսել բազմաթիվ արժեքավոր հատկանիշներ, որոնք կարող են լրացնել մեր պատկերացումները տվյալ խնդրի վերաբերյալ: Նույն կերպ, հիմնական ցուցակից դուրս են մնացել նաև մի խումբ դամբանադաշտեր կամ դամբանախմբեր, որոնք ներկայացված են բավարար թվով ընտրված հատկանիշներով, սակայն իրենց կազմում եղած որևէ դամբանային միավոր չի ընդգրկվել թաղման համալիրների քննարկվող ցուցակում: Այդպիսի դամբանախմբեր-դամբանադաշտերն առայժմ 7-ն են (Անիպեմզա, Իջևան, Բերդ, Ուչքիլիսա, Սադախլո, Բջնի, Արևշատ): Այս բոլոր 18 դամբանադաշտերն ու դամբանախմբերը, որոնց հնագիտական հետազոտությամբ գրանցվել են առնվազն 5 կիմերական կամ սկյութական հատկանիշ, մենք ընդգրկել ենք առանձին ցուցակում: Դա թույլ է տալիս տվյալ խմբի ներսում անհրաժեշտ համեմատություններ կատարել, քանի որ խմբի մեջ մտնող առանձին միավորները միմյանց հետ արդեն համաչափելի են: Ներկայացվում է ընտրված հատկանիշների բաշխման ամփոփիչ աղյուսակն ըստ 18 դամբանադաշտերի և դամբանախմբերի, ինչպես նաև վերջիններիս բաշխվածության գրաֆիկը՝ ըստ հատկանիշների քանակի:

Չորրորդ գլխի երկրորդ ենթագլխում քննարկվում են բնակավայ-րերում կիմերա-սկյութական մշակութային ընդհանրության հատկանիշ-ներով համալիրների առկայության և դրանց թվագրության խնդիրները: Հանգամանքների բերումով, Կարմիր բլուրի բնակատեղի պեղումներն են հիմք դարձել Հայաստանում սկյութական առարկաների ամենանշանա-վոր հավաքածոներից մեկը ձեռք բերելու համար: Կիմերա-սկյութական մշակութային ընդհանրությանը բնորոշ հնագիտական հավաքածոներ են ձեռք բերվել նաև Էրեբունիի, Արգիշտիխինիլիի, Արմավիրի, Հայկաբերդի և բազմաթիվ այլ հուշարձանների պեղումներով: Քննարկվող մշակութային ընդհանրությանը բնորոշ բնակելի համալիրներ են հայտնի Մթնաձորում, Շիրակավանում, Գյումրիում, Քեթիում, Աստղիբլուրում, Բերդատեղում և այլ հնավայրերում (Թումանյան 2021, 331-333):

Փորձ է արվում հնարավորինս սահմանազատել հին հայկական (տեղական) և կիմերական կամ սկյութական (բերովի) հնագիտական մշակույթները: Մշակութային արժեք ունեցող տիպեր ստանալուց հետո միայն համեմատությունները կարող են արդյունավետ լինել և էապես նպաստել հնագիտական հուշարձանների թվագրությանը: Հակառակ դեպքում մնում է նշել, որ սկյութները նվաճել են մի շարք ամրոց-բնակավայրեր և որպես դրա ապացույց բերել միայն նետասլաքների առկայության ու դրանց վնասված լինելու հանգամանքները, ինչը և արվել է նախկինում: Միայն թե այս դեպքում անհասկանալի կմնա, թե որո՞նք են նվաճողների բնակելի և պաշտամունքային համալիրները, կուռքերը, զենքերը, աշխատանքի գործիքները, օգտագործած խեցեղենը և մնացած կահկարասին: Եթե չտրվեն այս հարցերի պատասխանները, ապա սկյութական համալիրները կարող են պարզապես «վերագրվել» հին հայկական մշակույթին, որից հետո դրանց տարանջատման անհրաժեշտությունն անգամ կվերանա: Իսկ մեր նպատակը հակառակն է՝ անհարկի միահյուսված հասկացությունների առանձնացումը:

Այս գլխի երրորդ հատվածաբաժնում դիտարկվում են բնակավայրերի պեղումներով, հնագիտական հուշարձանների տեղազննությամբ կամ պատահաբար հայտնաբերված առարկաները: Մինչ այժմ դիտարկվում էին միայն այն հավաքածոները, որոնք հայտնաբերվել են դամբարաններում: Սակայն կիմերա-սկյութական մշակութային ընդհանրությանը բնորոշ առարկաների բազմաթիվ օրինակներ հայտնաբերվել են բնակավայրերի պեղումներով, կան նաև պատահական գտածոներ: Օրինաչափ պետք է համարել այն փաստը, որ Մեծ Հայքի տարածքում թաղման համալիրի պեղումներով գտնվել է ընդամենը մեկ, իսկ տեղաշարժված վիճակում՝ երկու տասնյակից ավելի մարդակերպ մահարձան: Շավարշավանում (Есаян 1976, 222, 229, рис. 146,) և Հայկաջրում (Պետրոսյան և այլք 2008, 189) հայտնաբերված մարդակերպ քարե կուռքերը, հավանաբար, սկզբնապես կանգնեցված են եղել դամբարանների վրա: Համանման իրողություն է արձանագրված նաև մերձսևածովյան տարածաշրջաններում (Ольховский 1991, 62): Հին բնակավայրերի պեղումներով գտնված արտեֆակտերի համադրումը դամբանադաշտերում հայտնաբերված իրերին կարող է նպաստել քննարկվող խնդրի վերաբերյալ եղած պատկերացումների ճշգրտմանը և ամբողջացմանը: Այսպես, Կարմիր բլուրի պեղումների արդյունքների վրա հիմնվելով, Բ. Պիոտրովսկին գտնում է, որ Թեյշեբաինի քաղաքը փոխհարաբերությունների մեջ էր ոչ միայն Հյուսիսային Կովկասի, այլև Դնեպրի ավազանի սկյութների հետ (Пиотровский 1955a, 19): Գյումրիի, Աստղիբլուրի, Գարդմանի Սարիթեփեի բնակավայրերի պեղումներով

հայտնաբերված հավաքածոները համահունչ են իրենց շրջակայքի համաժամանակյա դամբանային համալիրներում գտնվածներին: Նման փաստերը վկայությունն են այն բանի, որ հիշյալ տարածքներում կիմերները կամ սկյութները հաստատվել են հիմնավորապես: Հայոց ձոր (Խոտանոցի) կիրճի դիմաց վեր բարձրացող բլրի տափակ գագաթին արձանագրվել են շինությունների հետքեր, որոնք, Հ. Մարտիրոսյանի և Հ. Մնացականյանի կարծիքով, կարող են լինել կացարաններ՝ կապված համանուն դամբանադաշտի հետ ոչ միայն տարածական առումով, այլև՝ ժամանակագրորեն (մ.թ.ա. VII դար): Դրանք ունեն կլոր կամ պայտաձև հատակագիծ (Мнацаканян 1952, 62. Мартиросян 1954, 45-46, рис. 10): Հատկապես վերջին հանգամանքը հիմք է տալիս մտորել բնակավայրի և դամբարանադաշտի մշակութային փոխառնչությունների մասին:

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
## ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հինգերորդ գլուխը բաղկացած է երկու բաժնից: Այս գլխի առաջին բաժնում քննարկվում են լեզվական նմանությունները և տեղանվանաբանական համընկնումները: Հիմք է ընդունվում նախկինում առաջ քաշված այն տեսակետը, որ կիմերները և սկյութները, ունենալով երկարատև շփումներ Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկների հետ և, հավանաբար, հետագայում դառնալով հայ ժողովրդի բաղադրատարրեր, պետք է զգալի հետքեր թողած լինեն հայերենի և հայկական տեղանվանաբանության մեջ (Ջահուկյան 1977, 75, 80. Ջահուկյան 1987, 501): Ցավոք, կիմերական լեզվի վերաբերյալ առկա տվյալներն առայժմ շատ սուղ են: Պահպանվել են ընդամենը երեք անձնանուն, մեկ հասարակ անուն և կիմերական ցեղախմբի անունն ու դրանով կազմված հատուկ անունները (Дьяконов 1956, 239. Ջահուկյան 1987, 494): Ենթադրվում է, որ այդ հասարակ անունը *արգիլն* է՝ վկայված հունարեն հոգնակի ἀργιλλαι ձևով (Ջահուկյան 1987, 495)՝ «ստորգետնյա կացարան» նշանակությամբ: Ըստ Ստրաբոնի, դրանցում ապրում էին կիմերները (Страбон, V,4,5; 812)[18]: Թվում է, թե հին Հայաստանի գյուղերից մեկը՝ Արգելը, իր անվան ծագումով պարտական է կիմերական

[18] (Կիսա)գետնափոր կացարաններով բնակատեղեր են հայտնաբերվել Կերչի թերակղզում՝ Կիմերիկում, որոնք թվագրվում են մ.թ.ա. II հազ. վերջ – I հազ. սկզբով (ավելի ստույգ՝ դրանք նախորդում են մ.թ.ա. VI-V դդ. բնակավայրերին - ԳԹ): Կիմերիկի ենթաշրջանում հայտնաբերված հիշյալ բնակատեղիները, հավանաբար, առնչվում են կիմերներին. տե՛ս Кругликова 1952, 115-117. Кругликова 1953, 136-138, 142:

*արգիլ* բառին: Հայաստանում եղել է նաև գյուղ՝ Արգիալ անունով (Հակոբյան և այլք 1986, 404-405):

Ինչ վերաբերում է սկյութերենին, ապա այստեղ կան բառեր, որոնք հայերենում ունեն համապատասխան զուգահեռներ: Այսպես, սկյութերեն՝ baxta, հայերեն՝ բախտ (Абаев 1949, 160. Иванов, Топоров 1965, 67), սկյութերեն՝ kuti- «շուն» (Абаев 1949, 171. Дьяконов 1956, 239), հայերեն՝ քութի կամ կուտիկ «շան ձագ» (Ջահուկյան 1987, 293), սկյութերեն՝ kana/κάνναβις (Абаев 1949, 170. Гамкрелидзе, Иванов 1984, 661), հայերեն՝ կանեփ: Սկյութերեն od բառարմատը՝ «հոգի, կյանք» նշանակությամբ, հարադրվել է հայերեն հոտ բառի հետ (Абаев 1949, 174), սակայն ավելի ակնհայտ է համեմատությունը աւդ/օդ-ի հետ (Ջահուկյան 1987, 114, 207, 258): Հնարավոր ենք համարում սկյութերեն bala «ռազմական ուժ», «զորախումբ» եզրաբառի[19] առադրումը հայերենի բարբառներում հանդիպող բալա՝ «որդյակ» բառին (ԺՀԼԲԲ 1969, 270), ինչպես նաև rasmā «մարտական շարասյուն, ջոկատ» (Абаев 1949, 177) և հայերեն *ռազմ* բառերի համադրումը: Հետաքրքիր է, որ bal բառը, որը «զորախումբ» իմաստով գործածվել է նաև օսերենում, բոլոր կենդանիներից կարող էր վերաբերվել միայն գայլերին[20]: Հայերենում գայլերի ոհմակը բոլուկ է կոչվում, իսկ հիշյալ բառը գործածվում է նաև ընդհանրական *խումբ* իմաստով (ԺՀԼԲԲ 1969, 335): Այստեղ, անշուշտ, սխալ չի լինի հավելել նաև սկյութական dānu *գետ* բառը, օսերենում՝ don, «ջուր», «գետ» նշանակությամբ (Абаев 1949, 46, 162. Гамкрелидзе, Иванов 1984, 671), որի զուգահեռը, ըստ երևույթին, առկա է նաև հայերենում *թ/դօն* ձևով և որն ունի «հորդ անձրև» իմաստը և սերտորեն առնչվում է «ջուր» գաղափարին (Ջահուկյան 1987, 207, 398. Ղազարյան 2000, 497): Ամեն դեպքում, պետք է հաշվի առնել, որ հայերենում և սկյութերենում բառային զուգադիպումները կարող են և ուղղակի փոխազդեցությունների արդյունք չլինել (Ջահուկյան 1987, 505):

Կարծիք է հայտնվել, որ կիմերներին առնչվող շատ աշխարհագրական անուններ են պահպանվել Անդրկովկասում (Смирнов 1966, 28): Հույն պատմիչների աշխատություններում Կապադովկիա կոչվող երկիրը հայկական աղբյուրներից հայտնի է որպես Գամիրք, որի հիմքում ընկած է կիմերների էթնիկական անվանումը (Меликишвили 1962, 324-325): Դնեստրի գետի հին անունը Թ/Տիրաս է (Հերոդոտոս, IV, 11. Смирнов

---

[19] Բալ(ա) եզրը կարելի է տեսնել οὐαστόβαλος, οὐαρζβάλακος - «զորաջոկատում սիրված կամ զորաջոկատը սիրող» անվանումներում. տե՛ս Абаев 1949, 160. Иванчик 1988, 44.

[20] Օսական ավանդության հիման վրա կարելի է վերականգնել, որ նվիրագործման փուլերով անցնող պատանի կամ երիտասարդ սկյութ ռազմիկներին անվանում էին «կտրիճ գայլ/շներ». տե՛ս Иванчик 1988, 38-44:

1966, 27), որն ըստ Խորենացու՝ Գամերի որդու և Թորգոմի հոր անունն է (Խորենացի, I, Ե): Այսպիսով հայկական ավանդության Գամեր/Գոմեր, Թիրաս, Թորգոմ անձնանունների եռյակն իր զուգահեռն ունի հունական ավանդությունում՝ կիմեր (ցեղանուն), Տիրաս (գետանուն), Տարգիտաոս (սկյութների նախահոր անունը)[21]:

Քսենոփոնի հիշատակած Գյումնիաս քաղաքը երբեմն նույնացվում է Կումայրի-Գյումրիին (Մանանդյան 1944, 16-17): Հիշենք, որ *կիմեր* էթնոնիմի համար վերականգնվում է *Gimĕ(i)r- սկզբնական ձևը (Иванчик 1996, 158): Գ. Ջահուկյանի կարծիքով, Կումայրիի կապված լինելը կիմերների անվան հետ հավանական է թվում հատկապես այն պատճառով, որ հայկական Շիրակ գավառի անունը կարող է բացատրվել սիրակ ցեղի անվամբ, «եթե կիմերների կազմում իրոք կային նաև այս ցեղի ներկայացուցիչներ» (Մանանդյան 1944, 29. Ջահուկյան 1977, 75-76. Ջահուկյան 1987, 495): Հայկական Շիրակ տեղանվան առնչվածությանը ս/շիրակ ցեղանվանը ժամանակին ուշադրություն են դարձրել նաև Ն. Մառը և Հ. Մանանդյանը (Марр 1924, 270. Մանանդյան 1944, 33): Համանուն մի դաշտավայր հայտնի է նաև Աղվանքի Կամբեճան գավառում կամ որ նույնն է՝ Վրաստանում. Իորի (նախկին Կամբեճ) գետի ավազանը կրում է Շիրակ(ի) անվանումը: Տեղին է հիշել Նոր Շիրական երկրի անունը, որի սահմանակալին Ագաթանգեղոսը Հայքի բդեշխներից առաջինն է հիշատակում (Ագաթանգեղոս, ՃԻ, ՃԻԶ): Եթե ճիշտ է, որ Աշուրիսուայի զեկույցում վկայված Գամիռա երկիրը մասամբ ընդգրկում էր Շիրակի և Աշոցքի տարածքը, ապա այս համատեքստում առավել ընդունելի է դառնում Կումայրի անվան ծագման վերոհիշյալ վարկածը (Երեմյան 1968, 92):

Հնագիտական տեսանկյունից խիստ «սկյութականացված» տարածաշրջաններից է Գուգարք նահանգը կամ Գուգարաց աշխարհը: Ըստ Խորենացու, Գուգարքի մի մասը ժառանգություն էր ստացել Գուշարը՝ Շարայի սերնդից (Խորենացի, II, Դ, Ը): Վերը քննարկված ուրարտական սեպագիր արձանագրության համաձայն, Շագայորդու /Սկայորդու անունը կապվում է Իշկուգուլու երկրի հետ, որը տեղադրվում է Կղարջքի հարևանությամբ (Арутюнян 1985, 94), հավանաբար, նույնպես Գուգարք նահանգում: Ուստի, հավանական է, որ այս Իշպակա-Սկայորդի-Շագայորդին *գոգ* ցեղի առաջնորդն էր: Բացառված չէ, որ գոգ ցեղանվան հետ կապված լինեն Հայկական լեռնաշխարհի մի շարք տեղանուններ ևս՝ Գոգաշեն, Գոգասուն, Գոգարան, Գոգարանց, Գոգ(հ)ովիտ և այլն:

Շակաշեն գավառում համանուն ամրոց, հավանաբար, նաև՝ ավան է եղել: Նույն անունով բնակավայր է հայտնի և Փոքր Հայքում: Ըստ Ղ.

[21] Ստորև կտեսնենք, որ սկյութական Տ/Թարգիտաոսի նմանությունը հայոց Թորգոմ անվանը պատահական չէ:

Ալիշանի, Շակաշեն գավառի անունը մնացել է սակ կամ շակք ցեղանունից: Հավանաբար, համանման ծագում ունի նաև Շաքե տեղանունը (գավառ և բնակավայր Աղվանքում): Էթնիկական նույն անվանումն է դիտվում Սյունիքի մի շարք տեղանուններում ևս՝ Շիկաքար, Շիկահող, Շաքի:

Գ. Ղափանցյանի կարծիքով, Saka (սկյութ) բառը հայկական շրջանում անգամ դեռևս չի կորցրել էթնիկական ծագման հետքերը, ի դեմս «zok» անվանման (Ղափանցյան 1944, 85): Հայաստանում ընդունված է «զոկ» անվանել Գողթան գավառի բնակիչներին (Սամուելյան 1931, 87. Աբեղյան 1966, 135. Երեմյան 1968ա, 116): «Գահնամակ»-ի հայոց իշխանների շարքում հիշատակվում է նաև *Նախճերի*ն կամ նախճերի իշխանը (Ադոնց 1987, 280-281, 293-294): Նախճավան տեղանունը[22] կարելի է ստուգաբանել որպես նախճերի ավան, որն ավելի ուշ՝ ժողովրդական ստուգաբանությամբ, դարձել է Նախիջեւան (Ջահուկյան 1987, 443): Այստեղից կարելի է եզրակացնել, որ նախճերը[23] սկյութական ցեղ են: Նախճաւան էր կոչվում Պարսկահայքի քաղաքներից մեկը, որը գտնվում էր Կապուտան լճի արևմտյան ափին:

Մեծ Հայքի Տուրուբերան նահանգում հայտնի են Ասպակունեաց ձոր կամ Ասպակունիք գավառը (Շատախի գետահովիտ), Ասպական գետը (այժմ՝ Շատախ, Սասունում) և Ասպականք բնակավայրը (Տալվորիկում) (Երեմյան 1963, 38): Հիշյալ բոլոր տեղանուններն ունեն ընդհանուր հիմք՝ Ասպակ անունը: Հայերենում այդպես կարող էր հնչել Իշպակայի՝ սկյութների առաջնորդի անունը (Երեմյան 1968ա, 98): Սկյութական այդ անունը Տանահսում հայտնի է Aspakos ձևով (Дьяконов 1956, 245, прим. 5): Ասպակունիք գավառի մյուս՝ Գոգովիտ անվանումը կարող է ծագած լինել սկյութական *գոգ* ցեղախմբի անունից (Մանանդյան 1944, 40): Ինչպես տեսնում ենք, Շագապուտարա-Շագայորդի-Սկայորդի-Իշպակա-Ասպակի անունը կապվում է և՛ Ասպակունիք-Գոգովիտի, և՛ Գուգարքի հետ, որոնք երկուսն էլ, հավանաբար, ծագում են նույն ցեղախմբի անունից: Այս վարկածի օգտին է վկայում նաև այն տեղեկությունը, որ Սենեքերիմին սպանողներից մեկին՝ Սանասարին, Սկայորդին բնակեցնում է մեր երկրի հարավարևմտյան կողմում (Խորենացի, I, ԻԳ):

Թղիթ տեղանունը համահունչ է հարավօսեթական Թլի բնակավայրի անվանմանը, որտեղ հայտնաբերված սկյութական հուշարձանները

---

[22] Միջնադարյան աղբյուրներում առկա է նաև Նախչուան ձևը. տե՛ս Վարդան Արևելցի, 16, 33:

[23] Հմմտ. հայերեն *նախճիր* բառի հետ, որն ունի «սաստիկ կոտորած, արյունահեղություն» իմաստը. տե՛ս Աճառյան 1977, 422. Ղազարյան 2000բ, 268 և այլն: Վերն արդեն խոսվել է այն մասին, որ «սկյութների» արշավանքներն ուղեկցվում էին կոտորածներով: Այդ են վկայում նաև հնագիտական հետազոտությունների արդյունքները:

վաղուց հայտնի են գիտական հանրությանը (Техов 1971. Техов 1980. Техов 1985): Թլիա կոչվող գյուղ կա նաև Իմերեթիայում, Ցխենիսծղալի գետի ափին[24]: Արևմտյան Հայաստանի Ճմին բնակավայրի անունը մտել է գիտական շրջանառության մեջ՝ դրա մոտ գտնվող ուրարտական Ոսկեբլուր (Երզնկայից ոչ հեռու) հնավայրի կապակցությամբ (Капаницян 1947, 101. Ешая, Абаджян 1992, 175): Նման ձևով է հնչում նաև Օսեթիայի բնակավայրերից մեկի անվանումը՝ Ճմի (ռուսերեն՝ Чми), որտեղ ի հայտ են եկել ոչ միայն կոբանյան տիպի հնագիտական համալիրներ, այլև՝ ուրարտական բրոնզե սաղավարտ (Уварова 1900, 111-113, 122-125. Ivantchik, Moshinskiĭ 2001, 288-290): Նույն կերպ, հնչյունաբանորեն, համընկնում են Սուլուխը (Տարոնում) (Պետոյան 2005, 88-89) և Սոլոխան (սկյութական «արքայական» դամբանաբլուր Դնեպրի ավազանում) (Манцевич 1987, 5-7. Гуляев 2013, 26), Կումայրին (Շիրակում) և Կիմերիյը (ասիական Բոսպորում) (Десятчиков и др. 1984, 88), Կեմերեկը (Թեմուրճյան 1970, 19-20)[25] կամ Գամիրք-Կեմերեկը (Գաբիկյան 1924, 12) (Փոքր Հայքում) և Կիմերիկը[26] (Կերչի թերակղզում): Օսեթիայում է գտնվում Գողիաթ-դոն գետը, որի մոտ գտնվող Գողիաթ գյուղի տարածքում հայտնաբերվել է ուրարտական սաղավարտ (Уварова 1900, 271, 276-277. Ivantchik, Moshinskiĭ 2001, 288-290, fig. 1, 2): Ակնհայտ է Գողիաթի նմանությունը Թռեղքի Գողիանք և Կոտայքի Գողթ գյուղանուններին, որոնք համադրելի են Վասպուրականի Գողթն գավառի անվանը, որը կոչվում է նաև Գողթան տուն (Հակոբյան և այլք 1986, 935):

Վերջին գլխի երկրորդ հատվածաբաժնում լուսաբանվում են դիցաբանական ընդհանրությունները: Թեև առասպելների գնահատելի կողմը դրանց «պատմականությունը» չէ, այնուամենայնիվ, հետազոտողները կարող են բազմաթիվ օգտակար տեղեկություններ քաղել ավանդազրույցներից (Смирнов 1966, 22): Մասնավորապես, պատմական նախատիպերի և դեպքերի վերակազմության տեսանկյունով ուսումնասիրվել են ինչպես հայկական էպոսն ու առասպելները (Պետրոսյան 1997ա, 47-58. Քոսյան 1998. Петросян 2002, 148-170), այնպես էլ սկյութական լեգենդները (Ельницкий 1970): Այս աշխատանքում մենք փոքր-ինչ այլ ուղի ենք ընտրել, փորձելով վեր հանել հայկական դիցաբանության մեջ և սկյութական առասպելներում առկա նմանություններն ու ընդհանրությունները:

---

[24] Ուշագրավ է, որ Ցխենիսծղալի վրացերեն գետանունը հայերեն թարգմանվում է «Ձիու ջուր»:

[25] Կեմերեկ տեղանվան հետ միասին գործածական էր նաև Գամրակ ձևը, կեմերեկցիներին կոչում էին նաև գամրիկցի:

[26] Կիմերիկի առնչվածությունը կիմերներին հիմնավորվում է ոչ միայն անունների նմանությամբ, այլև պեղումներով հայտնաբերված կիսագետնափոր կացարանների և հնագիտական բնորոշ իրերի հայտնաբերման փաստերով. տե՛ս Кругликова 1953, 136-139, 142. Смирнов 1966, 35:

Սկյութական լեգենդների և ավանդազրույցների հնագույն նմուշները պահպանվել են հույն պատմիչներ Հերոդոտոսի, Կտեսիասի, Դիոդորոս Սիկիլիացու և այլոց երկերում (Раевский 1985, 35): Ըստ Հերոդոտոսի, սկյութների նախահայրը Տարգիտաոս է կոչվել (Հերոդոտոս, IV, 5): Սկյութական *Տ/Թարգիտաոսի* նմանությունը հայոց նախապապ *Թորգոմի* անվանը չի կարելի պատահականություն համարել, քանի որ հիշյալ նախնիները համարժեք են նաև իրենց առասպելաբանական գործառույթով: Հայկական Թորգոմի կրկնակ կովկասյան *Թարգամոս* (Мровели, 21) և սկյութական *Տարգիտաոս* անունները, ինչպես և դրանք կրող կերպարները նույնպես համադրելի են համարվում (Ельницкий 1970, 67):

Հովհան Մամիկոնյանը պատմում է, որ Տարոնի Կուառս, Մեղտի և Հոռեանք ավանները կառուցել են երեք եղբայր՝ Կուառը, Մեղտեսը և Հոռին: Ըստ մեկ այլ առասպելի, Կիև քաղաքը հիմնադրվել է Կրի, Շչեկ և Խորիվ եղբայրների կողմից: Այս երկու առասպելներում ոչ միայն առանձին նմանություններ են դիտվում, այլև՝ ընդհանուր բնույթի և էական մանրամասների համապատասխանություններ (Марр 1924, 271-282):

Արա Գեղեցիկ ավանդավեպում, որը գրի է առել Ե. Լալայանը, Արայի կին Զվարթը պատմում է հավլունի թրի մասին, որը կայծակի թուր էր՝ երկնքից ընկած, կարող էր կարճանալ և երկարել: Թուրը ծովը գցելիս՝ ջրային տարերքը «կատաղում» է (Լալայան 1902, 150-151), ինչպես լինում է Բատրազի թրի դեպքում: Բատրազն ամպրոպային հերոս է, նրա թուրը ևս, ինչպես Թուր Կեծակին, կարող է ինքնուրույն կոտորել թշնամիներին (Дюмезиль 1976, 58): Պատերազմի աստծո պաշտամունքը, որին սկյութները երկրպագում էին թրի կերպարանքով, նրանց հոգևոր կյանքում կարևոր տեղ էր զբաղեցնում (Жебелев 1953, 35. Абаев 1962, 450): Հատկանշական է, որ սկյութական ակինակը զուգորդվում էր կայծակի հետ (Алексеев 1991, 278)՝ ինչպես հայկական Թուր Կեծակին:

«Սասնա ծռեր»-ի նախամայրը Ծովինարն է, իսկ սկյութների նախամայրը Բորյուսթենես գետի դուստրն է: Երկուսն էլ ջրային դիցուհիներ են: Վերջինիս ամուսինը Զևսն է (Հերոդոտոս, IV, 5), իսկ Ծովինարն ինքը կայծակեղեն էակ է (Հարությունյան 2000, 82): Ենթադրվում է Ծովինարի և Անահիտի ամուսինների համապատասխանությունը (Պետրոսյան 1997ա, 44), որտեղից նույնպես կարելի է վերականգնել Ծովինարի ամուսնու ամպրոպային բնույթը: Հիշենք, որ Խորենացին ևս Արամազդին բնորոշում է որպես «ամպրոպային» (Խորենացի, II, ՁՁ):

Ակնհայտ նմանություններ կան «Նարտական էպոսի» Ձեռասայի և հայկական Ծովինարի միջև: Ա. Պետրոսյանի կարծիքով, հայկական և օսական էպոսների համապատասխանությունները ցույց են տալիս դրանց ծագումնաբանական մերձավորությունը (Петросян 2002, 12 и сл.):

Նմանություններ են դիտվում հայկական և օսական դյուցազներգությունների հերոսների հաջորդ սերնդային շարքերում ևս (Պետրոսյան 1997ա, 32-33):

**Եզրակացություններն** ամփոփում են Հայկական լեռնաշխարհում կիմերա-սկյութական մշակութային ընդհանրության հիմնախնդրի ուսումնասիրության հիմնական արդյունքները: Ատենախոսության հիմքը կազմող հնագիտական հետազոտությունների արդյունքները զուգակցելով գրավոր վկայությունների, տեղանվանաբանական տվյալների, բանագիտական տեղեկությունների հետ, կարելի է հետևյալ եզրակացություններն անել:

1. Այս աշխատությամբ հաստատվում է կիմերա-սկյութական մշակութային ընդհանրության գոյությունը Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. VIII դարի վերջ - VI դարերի հնագիտական մշակույթների շարքում: Մեր ընտրանքի մեջ մտնող դամբանային համալիրների (առայժմ՝ 144) և դրանք իրենց կազմում ընդգրկող դամբանախմբերի (առայժմ՝ 60) քանակը հետագա ուսումնասիրությունների ընթացքում զգալիորեն կավելանա:

≠ Կիմերական ու սկյութական համալիրներին առնչվող Հայաստանի դամբանադաշտերում որոշակի թիվ են կազմում ներթող/իջեցուկ թաղումները: Իրենց ննջեցյալներին թաղելու նման ձևի ընտրության տրամաբանական բացատրություններից մեկը հուղարկավորողների մշտական բնակավայրի բացակայությունն է: Սկյութական թաղման ծեսին առնչվածությունը կարող է հուշել մարդ պատկերող որոշակի տիպի մահարձանի առկայությունը դամբանային համալիրի կազմում: Կմախքի մեջքի վրա ձգված դիրքը բնորոշ է սկյութա-սակական թաղման ծիսակարգերին: Սկյութական որոշ դամբարաններում հայտնաբերվել են տաշտաձև դիակալներ, որոնք չեն հանդիպում էթիունյան թաղման ծեսում: Մի շարք դեպքերում հուղարկավորություններն ուղեկցվել են մարդկանց զոհաբերություններով:

≠ Կիմերական և սկյութական թաղումների համար առանձնացրել ենք այլ էական բնութագրիչներ ևս՝ կապված կենդանիների զոհաբերության հետ: Առաջինը ձիու և/կամ ձիասարքի տեղադրումն է դամբարանում: Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. VIII դ. վերջ - VI դարերի դամբարաններում ձիու և մարդու համատեղ թաղումների զգալի ավելացումը նշանավորում է թաղման ծեսում փոփոխությունների նոր փուլ՝ կապված այլէթնիկ խմբերի ներխուժման հետ: Հուղարկավորումներն ուղեկցվել են նաև շան կամ գայլի զոհաբերությամբ:

≠ Կիմերական ու սկյութական դամբարաններում բրոնզե բազմաթիվ զենքերի առկայությունը ծանրակշիռ փաստարկ է հօգուտ այն տեսակետի, որ երկաթի լայն տարածման դարաշրջանում Հայկական լեռնաշխարհ ներթափանցած ցեղախմբերը գտնվում էին զարգացման ավելի ցածր մակարդակի վրա, քան տեղաբնիկները: Այս եզրահանգումը բխում է նաև մարդկանց զոհաբերությունների առկայության փաստերից:

2. Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. VII-VI դարերին վերագրվող հնագիտական համալիրներում հայտնաբերված զենքի և ձիասարքի հավաքածոների հետ միասին, սկյութական մշակույթի կարևոր բաղադրիչներից է նաև խեցեղենը: Խեցեղենի բնույթը, ձևը, զարդաբանվածքը և այլ հատկանիշները կարող են մշակութային փոփոխությունների դիտարկման կարևոր աղբյուր հանդիսանալ:
3. Կիմերների և սկյութների բնակատեղիների ուսումնասիրությունը հիմք է տալիս խոսելու բնակավայրերի և դամբարանադաշտերի մշակութային փոխառնչությունների մասին:
4. Դիտարկված լեզվական, տեղանվանաբանական և դիցաբանական ընդհանրությունները գալիս են հաստատելու հնագիտական ուսումնասիրություններով ստացված արդյունքները:
5. Հարկ է վերանայել այն տեսակետը, որ Հայկական լեռնաշխարհ ներխուժած քոչվորների փոքրաթիվ զորաջոկատները լուրջ ազդեցություն չէին կարող թողնել արդեն կազմավորված հայկական մշակույթի վրա: Այս թյուր պատկերացումը հետևանք է այն բանի, որ մեր տարածաշրջանում կիմերական և սկյութական ցեղախմբերի առկայության փաստերը մինչ օրս չեն ընդհանրացվել և արժեքավորվել մշակութային առումով: Ստացված արդյունքները վկայում են, որ հին հայկական մշակույթի կազմավորման գործում իր նպաստն է ունեցել նաև մշակութային երրորդ տարրը:
6. Հայկական լեռնաշխարհում կիմերա-սկյութական մշակութային ընդհանրությանը բնորոշ հնագիտական համալիրների ի հայտ գալը մատնանշում է ուրարտական և էթիունյան մշակույթների ավարտական փուլը և ազդարարում հայկական հնագույն մշակույթի հաջորդ փուլի՝ հին հայկական մշակույթի սկզբնավորումը:
7. Այս աշխատությամբ որոշակի նախադրյալներ են ստեղծվում նաև կիմերական և սկյութական հնագիտական համալիրների տարբերակման համար, որի իրականացումը, իր հերթին, կարող է հիմք դնել Հայկական լեռնաշխարհում կիմերական և սկյութական մշակույթների առանձին ուսումնասիրությանը:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Ուջանի դամբանաթումբը, «Պատմա-բանասիրական հանդես», 1993, թ. 1-2 (137-138), էջ 133-146:
2. Գուսանագյուղի դամբարանը հին հայկական մշակույթի սկզբնավորման համատեքստում, «Հին Հայաստանի պատմության և մշակույթի հարցեր», Գևորգ Տիրացյանի հիշատակին նվիրված գիտաժողովի զեկուցումներ (խմբ. Ա. Քալանթարյան, Ս. Հարությունյան), Երևան, ՀԱԻ հրատ., 2001, էջ 20-27:
3. Հայաստանի ուշբրոնզեդարյան դամբարանների կառուցվածքը, «Պատմա-բանասիրական հանդես», 2003, թ. 1 (162), էջ 166-185:
4. Արա Գեղեցիկ և Շամիրամ, Երևան, «Զանգակ-97», 2005, 52 էջ:
5. Թաղման ծիսակարգերը ուշբրոնզեդարյան Հայաստանում, «Պատմա-բանասիրական հանդես», 2007, թ. 1 (174), էջ 138-152:
6. Արուճի № 4 դամբանաբլուրը, «Խալդյան զորությամբ...», Հոդվածների ժողովածու նվիրված Բորիս Պիոտրովսկու 100-ամյակին (խմբ. Պ. Ավետիսյան, Ա. Պետրոսյան), Երևան, «Գիտություն», 2010, էջ 109-131:
7. Նկատառումներ Հայաստանի ուշբրոնզեդարյան թաղումների գույքին առնչվող որոշ հարցերի վերաբերյալ, «Պատմա-բանասիրական հանդես», 2010ա, թ. 3 (185), էջ 147-160:
8. Բրոնզեդարյան դամբարանները մահվան պատկերացումներում և դրանց կառուցվածքի առանձնահատկությունները, «Պատմա-բանասիրական հանդես», 2011, թ. 2 (187), էջ 212-225:
9. «Վարդգես մանկան» վիպական պատառիկի նոր մեկնաբանություն, «Պատմաբանասիրական հանդես», 2012, թ. 2 (190), էջ 198-209:
10. Կիմերա-սկյութական մշակութային ընդհանրության դրսևորումները Հայկական լեռնաշխարհում (ըստ հնագիտական տվյալների), «Պատմաբանասիրական հանդես», 2017, թ. 3 (206), էջ 162-179:
11. «Կիմերա-սկյութական մշակութային ընդհանրություն» եզրույթը, «Արագածի թիկունքում»: Հնագիտական հետազոտություններ՝

նվիրված Տ. Խաչատրյանի հիշատակին (խմբ. Հ. Ավետիսյան և այլք), Երևան, «Գիտություն», 2018, էջ 214-217:

12. Կիմերները և սկյութները Հայկական լեռնաշխարհում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2019, թ. 2 (656), էջ 219-240:

13. Սեպագիր աղբյուրները Հայկական լեռնաշխարհում կիմերների և սկյութների ներկայության մասին, «Պատմաբանասիրական հանդես», 2020, թ. 2 (214), էջ 162-179:

14. Մթնաձոր ամրոց-բնակատեղի աղեղնաձև պատով շինությունը, Ուդուրի-Էթիունի երկրի հնագիտական ժառանգությունը (խմբ. Ա. Բոբոխյան, Մ. Բաղալյան), Երևան, ՀԱԻ հրատ., 2021, էջ 328-336:

15. Հայկական լեռնաշխարհի կիմերական և սկյութական դամբարանների բաշխվածության հարցի շուրջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2021ա, թ. 1 (661), էջ 235-245:

16. Б. Б. Пиотровский – о присутствии киммерийской и скифской культур на Армянском нагорье, Б. Б. Пиотровский и археология. Сборник научных статей (ред. А. Пилипосян), Ереван, Изд. “Службы по охране исторической среды и музеев-заповедников”, 2014, с. 112-115.

17. К вопросу о датировке погребений железного века Армении, Российская археология, н. 3, Москва, 2019, с. 26-39.

18. The Cimmerian-Scythian Sepulchres of the Armenian Highland, “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies”, Vol. V, Iss. 2, Yerevan, 2010, pp. 188-200.

19. Cimmerians and Scythians in the Armenian Highland (Archaeological Formulation of the Problem), “Journal of Armenian Studies”, No. 2 (11), Yerevan, 2016, pp. 26-40.

20. Cimmerian and Scythian Funerary Rituals in the South Caucasus, “Near Eastern Archaeology”, Vol. 80, No. 3, Chicago, 2017, pp. 196-201.

21. The Issue of the Scythian Presence in Armenia in the Works of Gevorg Tiratsyan, In: P. Avetisyan, A. Bobokhyan (eds.), Archaeology of Armenia in Regional Context, Yerevan, Publishing House of the IAE, 2021, pp. 255-258.

**Туманян Гарегин Саакович**

# КИММЕРИЙЦЫ И СКИФЫ НА ВОСТОЧНОЙ ЧАСТИ АРМЯНСКОГО НАГОРЬЯ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ ДАННЫМ)

Диссертация на соискание ученой степени доктора исторических наук
по специальности 07.00.03 “Археология”
Защита состоится 14 июня 2021 г. в $14^{00}$ часов на заседании
специализированного совета 007 ВАК по археологии и этнографии при
Институте археологии и этнографии НАН РА
(адрес: Ереван-0025, ул. Чаренца 15)

## РЕЗЮМЕ

В армянской археологии эта проблема до сих пор не изучалась, хотя некоторые вопросы косвенно затрагивались. Делалась попытка выделить отдельные элементы скифской культуры в памятниках Закавказья. Однако, принцып выбора отдельных элементов может способствовать лишь разъяснению культурных связей, но не изучению какой-либо культуры.

Обобщая известные археологические данные, можно создать основания для определения места киммерийско-скифской культурной общности в ряду синхронных археологических культур Армянского нагорья. Этим способом можно частично устранить противоречие, существующее между данными древних письменных источников и результатами археологических исследований. Письменные источники сообщают о присутствии киммерийских и скифских племенных групп в разных регионах Армянского нагорья, а археологи, осуществляющие раскопки одновременных памятников, данный вопрос не затрагивают. Сегодня роль археологии становится еще более значительной на пути решения киммерийской и скифской проблем. Научное обсуждение каждой культуры следует начинать по возможности с полного привлечения культурообразующих комплексов и их всестороннего исследования.

С этой целью из 60-и могильников мы выбрали 144 погребений в каждом из которых наличествует три и более признака или предмета, характерные для киммерийско-скифской культурной общности. Инвентарь, характрный для киммерийских и скифских погребений был выделен по данным археологических раскопок (в том числе – по пиктографии) и письменных источников. Учтено и то обстоятельство, что на Армянское нагорье вторгались отряды киммерийских и скифских воинов-всадников.

В киммерийских и скифских могильниках Армянского нагорья определенное число составляют впускные погребения. Одной из причин этого явления может быть отсутствие постоянного местожительства. О скифской принадлежности захоронения может свидетельствовать каменное антропоморфное изваяние, входящее в состав погребального комплекса. Для скифского погребального обряда также характерно вытянутое положение костяка на спине. На основании некоторых признаков ритуала в ряде случаев можно сделать заключение, что основные захоронения сопровождались жертвоприношениями людей. Для киммерийских и скифских захоронений

выделяется еще один характерный элемент – нахождение в погребальном комплексе коня и/или конского убора. В данных погребениях, очевидно, хоронились трупы воинов-всадников.

Исходя из положения, что на Армянское нагорье вторглись вооруженные воины-всадники, к прежнему списку артефактов киммерийско-скифской культурной общности мы добавили следующую группу предметов: точильные камни с кольцом для подвешивания, кривые ножи, пики, булавы, некоторые типы бронзовых поясов, металлические чаши-фиалы. Основываясь на фактах нахождений в погребениях, этот список можно пополнить костяными и бронзовыми трубочками и разными предметами роскоши.

В археологических комплексах восточной части Армянского нагорья, датированных VII-VI вв. до н.э., наряду с коллекциями оружия и конского убора важными характеристиками вляются также керамика, орудия труда, предметы роскоши и пр. Несмотря на существующее мнение о неприемлимости рассматривания керамики в качестве существенного признака культур номадов, в данной работе делается попытка показать, что нельзя игнорировать ассортимент глиняных сосудов, характерный для скифских культурных комплексов. Форма, орнамент и другие признаки керамических сосудов могут стать важным источником для наблюдения культурных (и этнических) перемен.

В процессе изучения киммерийских и скифских захоронений Армянского нагорья также выяснилось, что аналогии многим закрытым археологическим комплексам, наделенным киммерийско-скифскими признаками и датируемым концом VIII-VI в. до н.э., можно иногда найти в погребальных комплексах “конца II – начала I тыс.” до н.э. Для устранения данного противоречия, присутствующего в вопросе синхронизации упомянутых комплексов, нужно обратиться к датировке тех археологических памятников, которые принимаются как ранние, но по своему устройству, погребальным ритуалам или типологическому составу инвентаря однородны с погребальными комплексами киммерийско-скифской культурной общности. Автор также обращает внимание на несовершенность принятых методов датировки, когда в условиях синхронного существования в каком-либо регионе двух и более археологических культур какой-либо археологический комплекс датируется без уточнения его культурной принадлежности.

Множество образцов упомянутых предметов обнаружены также раскопками древних поселений, есть и случайные находки. Сопоставление артефактов, найденных раскопками древних поселений с предметами, обнаруженными из прилегающих могильников, может способствовать дополнению и уточнению наших знаний о данной проблеме.

Все полученные результаты нашли место в сводных таблицах, на основании предварительного анализа которых были сделаны соответствующие выводы. Результаты археологических исследований сочетаются с письменными свидетельствами, ономастическими данными, фольклористическими и этнографическими сведениями. Под рукой исследователя находятся два типа письменных источников – клинообразные надписи и сообщения историографов. Все упомянутые источники сообщают ценные и очень важные сведения по обсуждающемуся вопросу.

**Tumanyan Garegin Sahak**

# CIMMERIANS AND SCYTHIANS IN EASTERN PART OF THE ARMENIAN HIGHLAND (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS)

Dissertation for the Doctor of History
on the specialization of "Archaeology" 07.00.03
The defense of the dissertation will be held on June 14, 2021, at 14:00 at the session of the Specialized Council 007 on Archaeology and Ethnography of SQC RA by the Institute of Archaeology and Ethnography
of the National Academy of Sciences of RA
(address: 0025 Yerevan, 15 Charents str.)

## SUMMARY

This problem was not explored in Armenian archaeology so far, although some issues were indirectly touched upon. Several investigators made an attempt to distinguish distinct elements of the Scythian culture present in Transcaucasian monuments. Yet, the principle of selecting distinct items can only contribute to revealing cultural relationships, but not to the exploration of any culture.

Summarizing the available archaeological evidence, fundamentals can be established for defining the place of the Cimmerian-Scythian cultural commonality among the concurrent archaeological cultures in the Armenian Highland. This can partially eliminate the contradiction between the information provided by ancient written sources and the findings of archaeological investigations, whereby diverse written sources attest to the presence of the Cimmerian and Scythian tribes in different areas of the Armenian Highland, while archaeologists excavating the relics of those periods almost never touch upon this issue. These days, the role of archaeology becomes more important in addressing the Cimmerian and Scythian problems. The scientific discussion of any culture should begin from possibly complete involvement and comprehensive investigation of the complexes making that culture.

For this reason, from 60 cemeteries, we selected 144 burials that possessed with three or more characteristics or items typical for Cimmerian-Scythian cultural community. The goods typical for Cimmerian and Scythian burials were sorted based on data of archaeological excavations (including pictography) and from written sources. The fact of invasion of Cimmerian and Scythian warriors-riders into Armenian Highland was also considered.

In Cimmerian and Scythian burial grounds of the Armenian Highland there is a definite number of inlet burials. One of the reasons for this phenomenon is, perhaps, the absence of a permanent settlement. The "Scythian" belonging of a burial can be evidenced by the presence of an anthropomorphic funerary sculpture in the sepulchral complex. Skeleton's stretched position on its back is also typical for Scythian funeral rite. Based on some characteristics of the rite, in a number of instances it could be concluded that the main funerals were accompanied by human sacrifices. For Cimmerian and Scythian burials, one more important feature is

distinguished – the presence of a horse and/or horse tack in the sepulchral complex. Obviously, militant horsemen corps were buried in these tombs.

Based on the concept that brigades of Cimmerian and Scythian militant horsemen invaded Armenian Highland, we can add the following group of items to the previous list of artifacts of Cimmerian-Scythian cultural community: whetstones with hanging rings, curved knives, darts, maces, some types of bronze belts, metallic bowls or pots. Based on the facts of findings in burials, this listing could be supplemented with bone or bronze tubes and other luxury goods.

In archaeological complexes of eastern part of the Armenian Highland dated VII-VI centuries B.C., pottery, work tools, luxury items, etc., are important constituents of Scythian culture along with weapon and horse tack collections. Despite the existing opinion that clayware should not be viewed as a substantial feature of the cultures of nomadic tribes, yet, I made an attempt to prove that the assortment of ceramics typical for Scythian archaeological complexes should not be ignored. The shape, ornaments, and other characteristics of pottery can serve as an important source for detecting cultural (and ethnical) changes.

When exploring the Cimmerian and Scythian sepulchers in the Transcaucasia, we faced a contradictory situation. It came out that the analogues of many closed complexes with Cimmerian-Scythian features, dated to the end of VIII – VI centuries B.C., could be found in burial complexes dated to the end of II millennium – beginning of the I millennium B.C. It became apparent that, to eliminate the existing contradiction in the synchronization of these complexes, it is necessary to reconsider the dating of those archeological monuments that are viewed as earlier but are similar to the burial complexes of Cimmerian-Scythian cultural commonality by their structure, funeral rituals, or typological composition of the goods. The author discusses also the deficiency in applying the accepted methods of dating, when, in the synchronic presence of two or more archeological cultures in a given region, an archeological complex is being dated without specifying its cultural belonging.

Many examples of the mentioned items were found also during excavations of ancient settlements, there are accidental findings as well. Comparison of artifacts uncovered during excavations in ancient settlements with those found in nearby burial grounds could contribute to adjusting and adding our knowledge on the issue.

The findings were summarized on spreadsheets and, based on the preliminary analysis of the latters, adequate conclusions were made. The results of archaeological investigations are combined with written testimonies, onomastic data, folkloristic and ethnographic information. Two types of written sources are available for an explorer – cuneiform inscriptions and statements of historians. All the mentioned sources provide valuable and very important data on the discussed issue.